

ՀԻՄ. ՀԱՐՈՍԱԿՆԵՐԻ

Ռ Ս Դ Բ Կ

II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

35 ԱՄՅԱԿԻ ՇՈՒՐՋԸ

Գ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938


5 | JAN 2016

Պրովետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԶԿԿ

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

Ռ Ս Դ Բ Կ
 II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
 35-ԱՄՅԱԿԻ ՇՈՒՐՋԸ
 (1903—1938)



Պ Ե Տ Հ Ր Ա Տ
 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
 ՅԵՐԵՎԱՆ • 1938

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
XX ԴԱՐԻ ՍԿԶԻՆԵՐԻՆ

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության յերկրորդ համագումարը (Բրյուսել—Լոնդոն, հունիսի 30—ոգոստոսի 23 1903 թ.) բացառիկ մեծ տեղ է դրավում կազմակերպված բանվորական շարժման պատմության մեջ, ուսսական հեղափոխության պատմության մեջ: II համագումարում 1903 թ. առաջացավ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Այդ ժամանակաշրջանում Լենինի շուրջը կազմվեց հեղափոխական մարքսիստների այն նշանավոր խումբը, վորը II համագումարի ժամանակից ի վեր սոցիալիզմի պատմության մեջ մտնում է բոլշևիկների անունով: Այդ փաստն իրենով հավերժացնում էր մի կարևորագույն տարեթիվ կոմունիստական կուսակցության պատմության մեջ, միջազգային հեղափոխական շարժման պատմության մեջ:

Կուսակցության յերկրորդ համագումարը տեղի ունեցավ կապիտալիզմի՝ իր վերջին ստադիային՝ իմպերիալիզմին անցնելու հետևանքով միջազգային բանվորական շարժման զարգացման մեջ տեղի ունեցող բեկման պարագայում, Ռուսաստանում հեղափոխական շարժման գերաճման և ուսսական բանվոր դասակարգը՝ վորպես միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանգարդ փոխարկվելու պարագայում:

Ռուսաստանը՝ մտնելով համաշխարհային իմպերիալիստական տնտեսության սխտեմի մեջ, հասավ բանվորների բարձր համակենտրոնացման՝ խոշոր ձեռնարկություններում: «Հայտնի յե, որինակ,—գրում էր ընկեր Ստալինը,—վոր 500 հոգուց ամելի բանվոր ունեցող ձեռնարկություններում Ռուսաստանում աշխատում էր բոլոր բանվորների 54%-ը, մինչդեռ այնպիսի զարգացած յերկրում, ինչպես Հյուսիսային Ամերիկան է, համանման

Պատմության
Հասարակական
Պատմություն
11-2853899

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ
К 35-ЛЕТИЮ П СЪЕЗДА
РСДРП
(1903—1938)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938

ձեռնարկություններում աշխատում եր բոլոր բանվորների ընդամենը 33%-ը»¹։

Ռուսաստանում կապիտալիզմը պատված եր մինչև պլուտալիստական հարաբերությունների թանձր ցանցով, ճորտատիրության մնացուկներով։ Բանվոր դասակարգը գտնվում եր կրկնակի ճնշման տակ։ Բանվորների աշխատավարձը չափազանց ցածր եր։ 1897 թվի հունիսի 3-ի որենքը 11½-ժամյա աշխատանքային ուր սահմանելու մասին, վորը հրատարակել եր ցարական կառավարությունը գործադուլային շարժման ճնշման ներքո, կապիտալիստները չէին կենսագործում։ 1899 թ. յերկրորդ կեսին Յեկրոպայում պայթեց տնտեսական ճգնաժամ, վորը բռնեց նաև Ռուսաստանը, վորտեղ նա ընթացավ սուանձնապես սուր կերպով։ Ամբողջ իր ծանրությամբ ճգնաժամն ընկավ բանվոր դասակարգի վրա։ Փակվում եյին ձեռնարկություններ, աճում եր գործազրկությունը, ձեռնարկություններում մնացած բանվորների աշխատավարձը նշանակալիորեն կրճատվեց։

90-ական թվականների յերկրորդ կեսի արդյունաբերական վերելքի պայմաններում բանվորների խլած գիշումները կապիտալիստները հետ վերցրին։ Ճգնաժամի տարիներին (1900—1903) հեռացվեցին 100 հազարից ավելի բանվորներ։ Արդյունաբերության մեջ յեղած ճգնաժամին միացան գյուղացիների աղքատութունն ու սովը։ «Ճգնաժամի դասերը» հողվածում Լենինը գրում եր. «Ռուսաստանում ընդհանրապես ճգնաժամի ներգործությունն անչափ ավելի ուժեղ ե, քան վորևե մի այլ յերկրում։ Արդյունաբերության մեջ յեղած կանգամանը մեզնում միանում ե գյուղացիների սովահարությունը։ Գործադուլի բանվորներին քաղաքներից վտարում են գյուղերը, իսկ ո՞ւր պետք ե վտարեն գործադուլի գյուղացիներին։ Բանվորներին վտարելով՝ ուղղում են քաղաքները մաքրել անհանգիստ ժողովրդից, սակայն, կարող ե պատահել, վոր այդ վտարվածներին հաջողվի՞ գյուղացիների գոնե մի մասին արթնացնել նրանց դարավոր հնազանդությունից և վեր հանել նրանց՝ դնելու վոչ միայն լուկ խոլերներ, այլև պահանջներ։ Բանվորներին ու գյուղացիներին այժմ մերձեցնում ե վոչ միայն գործազրկությունն ու սովը, այլև վոստիկանական այն ճնշումը, վորը բանվորներից խլում ե միավորվելու և պաշտպանվելու հնարավորությունը, գյուղացիներից խլում ե նույնիսկ

քաղաքական գոհաբերողների կողմից նրանց ցույց տրված ոգնությունը։ Վոստիկանական ծանր թաթը հարյուր անգամ ավելի ծանր ե դառնում միլիոնավոր ժողովրդի համար, վորը կորցրել և ապրելու բոլոր միջոցները»¹։

Տնտեսական գործադուլներից բանվորներն անցնում եյին քաղաքական գործադուլների, վորոնք իրենց հերթին վերածում եյին մասսայական քաղաքական ցույցերի։ XX դարի սկզբին բանվորական շարժումը ամենաբարձր աստիճանի յե բարձրանում։ 1900 թ. մայիսի 1-ին Ուարկովի 10 հազար բանվորները ցույցի դուրս յեկան՝ 8-ժամյա բանվորական ուր և քաղաքական ազատություն հեղափոխական լոզունգներով։ 1901 թ. Անդրկովկասում՝ Թիֆլիսի միջանի հազար բանվորներ ընկեր Ստալինի ղեկավարությամբ մարտականորեն նչեցին մայիսմեկյան տոնը։ Ռուստովի գործարանի բանվորների մայիսմեկյան գործադուլը Պետերբուրգում՝ 1901 թ. վերածվեց զինված ընդհարման՝ վոստիկանության և ժանդարմների հետ։ 1901—1902 թվականները նշվում են յերկրում քաղաքական ցույցերի աճումով։ Ռուստովյան հերոսական յերեքորյա պաշտպանության կապակցությամբ Լենինը յեզրակացություն և անում փողոցային զինված կովի, զինված ապստամբության մասին։ Նա ծաղրում ե այն ուպորտունիստների «բուրժուական գիտնականության հնոտին», վորոնք ջանում եյին Յուդեյսի հայացքները կեղծելու միջոցով ապացուցել փողոցային զինված կովի անհնարինությունը։ «Փողոցային կովը հնարավոր ե,—գրում եր Լենինը,—անհուսալի յե վոչ թե մարտիկների վիճակը, այլ կառավարության վիճակը, յեթե նրան հարկ լինի գործ ունենալու վոչ միայն մեկ գործարանի բնակչության հետ»²։

1902 թ. մարտի 3-ին ընկեր Ստալինը կազմակերպեց Բաթումի բանվորների 6-հազարանոց մի ցույց, վորը վերջացավ զինված ընդհարումով ժանդարմների և վոստիկանության հետ։ Ընկեր Ստալինի կազմակերպած Բաթումի ցույցը թափահարեց Անդրկովկասի և Ռուսաստանի հարավի բանվորներին ու գյուղացիներին։ 1902 թ. նոյեմբերին տեղի ունեցան խոշոր գործադուլներ և մասսայական քաղաքական ժողով, վորին մասնակցում եյին Դոնի Ռոստովի 30 հազար բանվորներ։

¹ Ստալին, Լենինի գծի հարցերը, հայ. հրատ., էջ 35։

¹ Լենին, Ճգնաժամի դասերը, Յերկ., հ. IV, էջ 187։

² Լենին, Նոր մարտադաշտ, Յերկ., հ. IV, էջ 117։

Բաթումի և Ռոստովի 1902 թ. ցույցերն ակնառու կերպով ցույց տվին, Վոր Ռուսաստանի բանվոր դասակարգն աճել է վորպես մի հզոր հեղափոխական ուժ: Լենինը Բաթումի և Ռոստովի գործադուլներում ու ցույցերում տեսնում էր ապստամբութեան նախաբանը:

«Այո, ապստամբութեաններ: Վորքան էլ վոր հեռու յեր «խակահան» ապստամբութեանից այլ, ըստ յերևութին, գործադուլային շարժման սկիզբը հեռու գավառական մի քաղաքում, սակայն այդ գործադուլային շարժման շարունակութեանը և նրա վերջն ակամա հենց ապստամբութեան միտք է հղացնում»:

Մայրամեկյան ցույցեր հետագա, 1903 թվին տեղի ելին ունենում Ռուսաստանի 63 քաղաքներում: 1903 թ. ամառը ծավալվեցին բանվորների ընդհանուր գործադուլներ Ռուսաստանի հարավում, Անդրկովկասում—Թիֆլիսում, Բաքում, Բաթումում և Ուկրաինայի բանվորական կենտրոններում—Կիևում, Յեկատերինոսլավում, Ուդեսայում և ուրիշ քաղաքներում: Այդ մասսայական քաղաքական գործադուլներին ու ցույցերին մասնակցում էր ավելի քան 200 հազար բանվոր:

Բանվոր դասակարգի քաղաքական յեղույթներն ազդեցութեան թողին գյուղացիութեան մեջ յեղած հեղափոխական շարժման վրա: Յեկոպական Ռուսաստանում 1902 թ. յեղել է 340 դյուղացիական յեղույթ ընդդեմ կալվածատերերի և ցարական իշխանութեան: Առանձնապես գյուղացիական շարժումները ծավալվեցին Ուկրաինայում՝ Խարկովի և Պոլտավայի նահանգներում և Վրաստանում, վորտեղ անմիջականորեն յերևում էր բանվորական գործադուլների, ցույցերի ազդեցութեանն ու հեղափոխական սոցիալ-դեմոկրատների ակտիվ աշխատանքը: Աշխուժացումը յերկրի սպառնցիոն տարրերի միջև—ուսանողութեան հեղափոխական յեղույթները, գեմասլոյական գործիչների յեղույթները և այլն—նույնպես բանվոր դասակարգի հեղափոխական կուլիարդյունքն էր:

Պետք էր պաշտպանել և ամրացնել բանվորական շարժման ինքնաբերականութեանը: Այդ կարող էր անել բանվոր դասակարգի մարտական հեղափոխական կուսակցութեանը միայն: Սակայն բանվոր դասակարգը XX դարի սկզբին գեոևս միասնական ծրագրով, տակտիկական պարզ դիրքորոշումներով, կազմակերպական

պարզորոշ սկզբունքներով կուսակցութեան չուներ: Ինչպես հայասի յե, 1898 թ. մարտին կայացած ՌՄԴԲԿ I համագումարը չստեղծեց և չէր էլ կարող ստեղծել այդպիսի կուսակցութեան: Սոցիալ-դեմոկրատական շարժումը մասնատված էր, ընթանում էր ինքնահոսով, այնտեղ տիրում էր տնայնադրծականութեանը: Տեղական կազմակերպութեանները տեղ-տեղ դրավվել ելին պրոլետարական քաղաքականութեան և պրոլետարական կուսակցութեան թշնամիների, այսպես կոչված՝ եկոնոմիստների կողմից:

1900 թ. փետրվարի 11-ին վերջանում էր Լենինի սիրելյան աքսորի ժամկետը: Յերբ նա թողեց աքսորը, նա ուներ հեղափոխական մարքսիզմի անսասան հիմունքների վրա պրոլետարական կուսակցութեան ստեղծելու համար մղվող պայքարի մշակված կոնկրետ պլան: Այդ նպատակին հասնելու համար Լենինը կարևորագույն միջոցը համարում էր համառուսական քաղաքական լրագրի կազմակերպումը: Լենինը համառ աշխատանք սկսեց այդպիսի լրագիր ստեղծելու համար:

1900 թ. դեկտեմբերին լույս տեսավ «Искра»-յի առաջին համարը: «Искра»-յի («Իսկրա»-յի) խմբագրութեան մեջ մտնում էլին. Լենինը, Պլեխանովը, Մարտովը, Պոտրեսովը, Ալեքսևրովը և Չասուլիչը: «Искра»-յի հետ միաժամանակ լույս էր տեսնում նաև «Заря» ժուռնալը, խմբագրութեան նույն կազմով, ինչ կազմվոր ուներ «Искра»-ն:

Լենինը «Искра»-յի կազմակերպիչը, ստեղծիչն ու հոդին էր. Լենինը վարում էր «Искра»-յի նամակադրութեանը Ռուսաստանի սեղանական կազմակերպութեանների հետ: Բանվոր դասակարգի կուսակցութեան ծրագրի, ստրատեգիայի, տակտիկայի ու կազմակերպութեան վոչ մի հարց չկա, վորին Լենինը պատասխան չտար «Искра»-յում և «Заря»-յում գետեղված իր բազմաթիվ հոդվածներում, «Ի՞նչ անել» նշանավոր դրքում և «Искра»-յի ժամանակաշրջանի իր մյուս աշխատութեաններում:

ԼԵՆԻՆՅԱՆ «ИСКРА»-ՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՆՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Լենինյան «Искра»-ն իրեն խնդիր էր դրել ստեղծել բանվոր դասակարգի կուսակցութեան: Իրա համար էր նախապատրաստվում ՌՄԴԲԿ II համագումարը: Սակայն այդ համագումարի դու-

1 Լենին, նոր դեպքեր և հին հարցեր, Յերկ. հ. V, էջ 208:

մարման համար հարկավոր եր ջախջախել ու պորտուենիստներին, ստեղծել հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ տեղերում, Ռուսաստանում, կռել սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական և կազմակերպական միասնություն: Ահա թե ինչու Լենինը «Искра»-յում ամենից առաջ խնդիր դրեց ճանաչման միանալը, և միանալու համար, մենք սկզբից պետք է վճռական կերպով և վորոշակիորեն սահմանադրամքները¹:

Ռուսական բուրժուազիայի վախենում եր բանվոր դասակարգի հեղափոխական շարժումից. նա վախենում եր՝ յերկրում բանվոր դասակարգի կողմից գյուղացիական շարժումը դեկավարելու քաղաքական ներգործությունից: Ռուսական և միջազգային բուրժուազիայի համար մեծ վտանգ եր ներկայացնում հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնալը Ռուսաստանում, մի այնպիսի կուսակցության, վորն ընդունակ կլինի բանվոր դասակարգին դաստիարակելու վորպես ժողովրդական հեղափոխության առաջնորդի: Ու պորտուենիստական տարբեր հոսանքները բանվոր դասակարգի մեջ բուրժուազիայի դործակալությունն եյին հանդիսանում, բուրժուական անբարոյականությունն եյին մտցնում բավորական շարժման մեջ: Բանվոր դասակարգի կազմավորվող կուսակցության համար լրջագույն վտանգ եր ու պորտուենիստական հոսանքը ՌՄԴԻԿ մեջ, այն ե՝ եկոնոմիզմը:

Պետք եր ամենից առաջ սահմանադրամքներ եկոնոմիզմից—միջազգային ու պորտուենիզմի այդ ռուսական տարատեսակությունից: 1899 թ. գերմանական ու պորտուենիստ Բերնշտայնը լույս ընծայեց «Սոցիալիզմի նախադրյալներ» իր գիրքը, վորի մեջ պատերազմ հայտարարեց հեղափոխական մարքսիզմին. այդ նույն ժամանակ Ֆրանսական սոցիալիստ Միլլերանը մտավ Ֆրանսիայի բուրժուական կառավարության մեջ, մի կառավարություն, վորը գնդակահարում եր բանվոր-դործադուրբներին: Լենինյան «Искра»-ն վեր բաժրացրեց պայքարի դրոշմ ընդդեմ միջազգային ու պորտուենիզմի, հանուն հեղափոխական մարքսիզմի:

Լենինը գրում եր. «Իրոք վոչ վոքի համար գաղտնիք չե, վոր ժամանակակից միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեջ յերկու ուղղություն ե գոյացել, վորոնց միջև կռիվը մերթ ընդմիջում և բռնկվում ե վառ բոցով, մերթ հանդարտվում ու մարմրում

«դինազազարի» ազու «բանաձևերի» մոխրի տակ: Ինչու՞ն ե կայանում «նոր» ուղղությունը, վորը «քննադատորեն» ե վերաբերվում «հին, դորմատիկ» մարքսիզմին, այդ բավականաչափ վորոշակիությունամբ ասաց Բերնշտայնը և ցույց տվեց Միլլերանը¹:

Պայքար մղելով մարքսիստական թեորիայի անբարատության համար, մերկայցնելով ռեվոլյուցիոնիստներին և նրանց ռուսական տարատեսակությունը—եկոնոմիստներին, Լենինը սովորեցնում եր. «Առանց հեղափոխական թեորիայի չի կարող հեղափոխական շարժում լինել», «առաջավոր մարտիկի դերը կարող ե կատարել միայն այն կուսակցությունը, վորը դեկավարվում ե առաջավոր թեորիայով»: Լենինը սովորեցնում եր, վոր ռուսական սոցիալ-դեմոկրատիայի համար թեորիայի նշանակությունն ուժեղանում ե յերեք հանգամանքով. նախ, նրանով, վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը Ռուսաստանում նոր ե կազմավորվում և իր հաջիվները չի մաքրել ու պորտուենիստների հետ, վորոնք ուղում են կուսակցությունը քաշել-պոկել հեղափոխական ուղուց, յերկրորդ, նրանով, վոր սոցիալ-դեմոկրատական շարժումը միջազգային ե իր եյությունամբ և այդ պատճառով կազմավորվող կուսակցությունը պետք ե պայքար մղի վոչ միայն ազգային, այլև միջազգային ու պորտուենիզմի դեմ. յերրորդ, նրանով, վոր ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ազգային խնդիրներն այնպիսիք են, ինչպիսիք չեն ծառայել աշխարհում վոչ մի սոցիալիստական կուսակցության առաջ: «Այդ խնդիր իրականացումը, վոչ միայն յեվրոպական, այլ նաև (կարող ենք մենք այժմ ասել) ասիական ռեակցիայի ամենահզոր նեցուկի խորտակումը ռուսական պրոլետարիատին կղարձներ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանդարդ»²:

Լենինը մերկայցնում ե ու պորտուենիստների «քննադատության ազատություն» լողունը, վորը քողարկումն ե հանդիսանում նրանց համար, ուլքեր դիտավորյալ կերպով աղավաղում ու գոհակացնում են մարքսիզմը: Լենինը սովորեցնում եր, վոր հեղափոխական մարքսիզմի թեորիան, վորպես բանվոր դասակարգի համաշխարհային շարժման ընդհանրացված յեզրակացություն, մտցվում ե բանվորական տարերային շարժման մեջ:

1 Լենին, Ի՞նչ անել, հայ. հրատ., էջ 18—19:

2 Լենին, Ի՞նչ անել, հայ. հրատ., էջ 46:

1 Լենին, «Искра»-յի խմբագրության հայտարարությունը, Յերկ., հ. IV, էջ 39—40:

Բանվորը դասակարգը տարերայնորեն շարժվում է դեպի սոցիալ-լիզմ, բայց սոցիալ-դեմոկրատների խնդիրն այն է, վոր ոգնեն բանվորներին յուրացնելու այն թեորիան, վորը փարոսի նման լուսավորում է բանվոր դասակարգի պայքարի ուղին, հեռանկար, ուղղութիւնը և վերջնական հաղթանակի վստահութիւնը և տակիս:

Եկոնոմիստների կողմից արհամարհական վերաբերմունքը դեպի թեորիան հասցրեց զիտակից տարրերի դերի, բանվորական շարժման մեջ կուսակցութեան դերի բացասմանը: Եկոնոմիստները, լինելով հեղափոխական մարքսիզմի թշնամիներ, խոնարհվում եյին բանվորական շարժման տարերայնութեան առաջ, նվազեցնում եյին կուսակցութեան դերը և դրանով իսկ նպաստում եյին բուրժուական իդեոլոգիայի ազդեցութեան ուժեղացմանը պրոլետարիատի վրա:

Եկոնոմիստները նվաստացնում եյին սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական խնդիրները: Նրանք քարոզում եյին տրեզ-յունիստական, բուրժուական քաղաքականութիւնը, բանվոր դասակարգի խնդիրները սահմանափակում եյին տիրող դասակարգերից զիջումներ ազերսելով, բավարար համարելով աշխատանքային որվա որենադրական սահմանափակումը ցարական կառավարութեան կողմից: Եկոնոմիստները քարոզում եյին միայն Ֆարբիկային մերկացումներ, խանդարում եյին հեղափոխական մարքսիստներին դաստիարակելու բանվոր դասակարգին՝ վորպէս առաջավոր մարտիկի ընդդէմ ցարական ինքնակալութեան: Լենինը «Աքրա»-յում, «Ի՞նչ անել» գրքում մերկացրեց եկոնոմիստներին, գրում եր, թե հեղափոխական սոցիալ-դեմոկրատներին պետք է վոչ միայն Ֆարբիկային, այլև համաժողովրդական մերկացումներ: Լենինը բանվոր դասակարգին դաստիարակում եր վորպէս ժողովրդական հեղափոխութեան առաջնորդի, ի դեմս սոցիալ-դեմոկրատի դաստիարակում եր վոչ թե տրեզ-յունիստի քարոզչութեան, այլ ժողովրդական տրիբունի, վորը կարողանա արձագանգել կամայականութեան ու ճնշման բոլոր դեպքերին, ինչ դասակարգերի կամ բնակչութեան խաղերի ել այդ վերաբերելու լինի:

Լենինը «Ի՞նչ անել» գրքում գրել է. «Դասակարգային քաղաքական զիտակցութիւնը բանվորի համար կարող է բերվել միայն դրսից, այսինքն տնտեսական պայքարից դուրս, բանվորներին և տերերին հարաբերութիւնների վոլորտից դուրս: Այն բնագավառը, վորից և միայն կարելի յե քաղել այդ զիտու-

թիւնը, բայց դասակարգերի և խաղերի՝ դեպի պետութիւնն ու կառավարութիւնն ունեցած վերաբերմունքի բնագավառն է, բայց դասակարգերի փոխհարաբերութիւնների բնագավառը: Ուստի այն հարցին, թե ի՞նչ անենք, վորպէսզի բանվորները քաղաքական զիտութիւն ձեռք բերեն,—չի կարելի տալ միմիայն այն պատասխանը, վորով մեծ մասամբ բավականանում են պրակտիկները, ել չենք խոսում այն պրակտիկների մասին, վորոնք հակված են դեպի եկոնոմիզմը, այն է՝ այս պատասխանը. «գնալ բանվորների մոտ»: Բանվորներին քաղաքական զիտութիւն տալու համար սոցիալ-դեմոկրատները պետք է գնան բնակչութեան բոլոր դասակարգերի մեջ, պետք է ամեն կողմ ուղարկեն իրենց բանակի շոկատները»¹:

Պրոլետարիատի քաղաքական խնդիրների նվաստացումը եկոնոմիստների մոտ սերտորեն կապված եր սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպական խնդիրների նվաստացման հետ:

Եկոնոմիստները պաշտպանում, սկզբունքի աստիճանի եյին բարձրացնում տնայնագործականութիւնը, մասնատվածութիւնը, տեղայնութիւնը: Լենինյան «Աքրա»-ն իրեն խնդիր եր դրել ստեղծել մարտական կենտրոնական կուսակցութիւն, կոնսպիրատիվ կուսակցական կազմակերպութիւն, վորը կազմված լինի պրոֆեսիոնալ հեղափոխականներից, վորը կարողանա միավորել և դեկավարել բանվոր դասակարգի և նրա բոլոր կազմակերպութիւնների պայքարը: «Տվե՛ք մեզ,—գրում եր Լենինը,—հեղափոխականների կազմակերպութիւն—և մենք շուտ կտանք մուսաստանը»:

Մասսաներին ընդդէմ ցարիզմի, ընդդէմ կալվածատերերի ու կապիտալիստների պայքարի տանելու ընդունակ նոր տիպի կուսակցութիւն ստեղծելու գործում մեծ նշանակութիւն ունեւր Լենինի «Ի՞նչ անել» գիրքը և մի քիչ ավելի ուշ Անդրկովկասում լույս տեսած, «Ի՞նչ անել» գրքին արձագանգած՝ ընկեր Ստալինի «Անցողակի կուսակցական տարածայնութիւնների մասին» բրոշյուրը: Բոլշևիզմի հիմնադիրների այս յերկու աշխատութիւնները նպաստեցին նշանակալիորեն լիկվիդացիայի յենթարկելու «տարընթացութեան, քայքայման, տատանման ժամանակաշրջանը», վորը Լենինն անվանում եր նաև պատանկական ժամանակաշրջան: Պայքարի կրակում հասունանում եր բանվոր-

1 Լենին, Ի՞նչ անել, հայ. հրատ., էջ 111:

րական շարժումը, դաստիարակվում եր հեղափոխական բանվորների, մասսաների առաջնորդների, պրոլետարական պրոֆեսիոնալ հեղափոխականների առաջավոր խավը:

Պրոֆեսիոնալ հեղափոխականը նա յե՛, ով ամբողջ կյանքը տալիս է հեղափոխության գործին, ով հեղափոխությունը դարձնում է իր պրոֆեսիան: Պրոֆեսիոնալ հեղափոխականների առաջնորդներն էյին Լենինն ու Ստալինը: Խոշոր պրոֆեսիոնալ հեղափոխականներ էյին մեր կուսակցությունը կառուցողները, Լենինի ու Ստալինի զինակիցներ—Յա. Մ. Սվերդլովը, Ինոուկենտի Դուբրովնսկին, Վիկտոր Կուռնատովսկին, Վլադիմիր Կեցխովեյին, Ալեքսանդր Ծուրուկիձեն, Ս. Մ. Կիրովը, Վ. Վ. Կուլբիչեվը, Փ. Ե. Ջերժինսկին, Իվան Բարուչկինը և կուսակցության գործի համար, կոմունիզմի գործի համար ուրիշ շատ անվեհեր մարտնչողներ:

Ստեղծելով նոր տիպի կուսակցություն, վորի կորիզը հանդիսանում էյին պրոֆեսիոնալ հեղափոխականները, Լենինը գրում էր, վոր նոր վերահաս ժամանակաշրջանը կտանի «դեպի մարտնչող մարքսիզմի ամրացումը... վոր ոպորտունիստների արիերգադիին «հերթափոխի» կզա ամենահեղափոխական դասակարգի իրոք առաջավոր շոկատը»¹:

Լենինը «Искра»-յում, «Ի՞նչ անել» գրքում գաղափարապես գլխովին ջախջախեց եկոնոմիստներին:

«Հին «Искра»-յի սյայքարը և «պոչականություն» թերրիայի փայլուն քննադատությունը, վոր տրված է Լենինի «Ի՞նչ անել» բրոշյուրում, վո՛չ միայն ջախջախեցին այսպես կոչված «եկոնոմիզմը», այլև ուսական բանվոր դասակարգի իսկապես հեղափոխական շարժման թերրիական հիմունքներն էլ ստեղծեցին»², — մատնանշում էր հետագայում ընկեր Ստալինը:

Բանվորների և գյուղացիների իսկական հեղափոխական մասսայական շարժման աճման հետ մեկտեղ աշխուժացում սկսվեց նարոդնիկական ինտելիգենցիայի միջև և հասցրեց քաղաքական կրախ կրած տեռորիզմի աշխուժացմանը: 1901 թ. ջախջախված նարոդնիկական խմբակների գանաղան բեկորների վրա առաջանում է սոցիալիստ-հեղափոխականների մանր-բուրժուական կուսակցությունը: Լենինն իր քննադատություն ամբողջ սրությունն ուղ-

1 Լենին, Ի՞նչ անել, հայ. հրատ., էջ 202:

2 Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., էջ 27:

ղում է եսերական տեռորիզմի դեմ, վորը նարոդնիկներին՝ պատմություն անող «հերոսներին» և հեղափոխության մեջ սրաստիվ մասնակցություն ունեցող «ամբոխի» մասին խղճուկ ու քաղաքականապես վնասակար թերրիայի արտահայտությունն էր: «Մենք կարծում ենք,—գրում էր Լենինը,—մի ամբողջ հարյուրյակ ցարասպաններ չէյին կարողանա կատարել այդպիսի դրզը-ուիչ ու դաստիարակիչ ներգործություն, ինչպես տասնյակ-հազարավոր բանվոր ժողովրդի մի մասնակցությունն այնպիսի ժողովներում, վորոնք քննարկում են նրանց կենսական շահերը և քաղաքականություն կապն այդ շահերի հետ,—ինչպես մասնակցությունը մի սյայքարում, վորը իսկապես վեր է հանում պրոլետարիատի նորանոր «ձեռք չտված» խավերը դեպի ե՛լ ավելի գիտակից կյանք, դեպի ե՛լ ավելի լայն հեղափոխական սյայքար»¹:

Առավել ևս վտանգավոր էյին այդ մոմենտում տեղ-տեղ—Սարատովում և Ուրալում—սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների միավորված կազմակերպություններ ստեղծելու փորձերը: Հեղափոխական մարքսիզմի և ուսուպիական նարոդնիկական սոցիալիզմի սկզբունքները միավորելու այդպիսի փորձեր անում էյին մանր-բուրժուական տարբերը, վորոնք չէյին կարող հասկանալ և չէյին հասկանում այն խորագույն սկզբունքային տարբերությունը, վորը բաժանում է մարքսիզմը նարոդնիկության վերջնամնացներից՝ բուրժուական հեղափոխականներից, եսերներից: Այդպիսի անսկզբունքային միավորում անցկացնողներից մեկն էր Ռիկովը Սարատովում, վորը հետագայում դարձավ կուսակցության մեջ հակահեղափոխական աջ թեքման կազմակերպիչ, իսկ ծավալուն սոցիալիստական հարձակման ժամանակաշրջանում—ժողովրդի թշնամի, Փաշիզմի ծախվող գործակալ:

Ամենևին պատահական չէ, վոր եկոնոմիստներն ու բուրժուականները նույնպես սկսեցին դրախվել տեռորով: Լենինն ընդգծեց, վոր եկոնոմիստների և եսերների միջև կա ներքին կապ-թե՛ սրանք և թե՛ նրանք խոնարհում են շարժման տարբերայնությունն առաջ: «Եկոնոմիստներն ու տեռորիստները խոնարհվում են տարբերային հոսանքի տարբեր բեկոնների առաջ. եկոնոմիստները—«գուտ բանվորական շարժման» տարբերայնությունն առաջ,

1 Լենին, Նոր դեպքեր և հին հարցեր, Յերկ. հ. V, էջ 208:

տեղորիտները—ինտելիգենտները ամենայնուհանդերձ իրողովմունքի տարերայնության առաջ, այն ինտելիգենտները, վորոնք չեն կարողանում կամ հնարավորութուն չունեն հեղափոխական աշխատանքը վորպես մի ամբողջութուն կապելու բանվորական շարժման հետ»¹:

Լենինը մերկացնում էր եսերներին ամենից առաջ վորպես ռեվոլյուցիոնիստները: Եսերները հանդես եյին դալիս պետութեան և պրոլետարիատի դիկտատուրայի մարքսյան թեորիայի դեմ, հանդես եյին դալիս դասակարգային պայքարի վերաբերյալ Մարքսի ուսմունքի դեմ: Եսերները խառնում եյին մի միասնական «աշխատավոր ժողովրդի» մեջ բանվորներին, գյուղացիներին, ինտելիգենտներին և քաղաքային մանր բուրժուազիային, բացասում եյին բանվորական շարժման ինքնուրույնութունը: Արեմուտքի ռեվոլյուցիոնիստների նման եսերները հայտարարում եյին, թե կապիտալիզմը գյուղում հող չունի, թե մանր արտաբուրժուազիան գյուղատնտեսութեան մեջ կայուն է: Եսերները շարունակում եյին մնալ կյանքի կողմից վաղուց ի վեր դատապարտված՝ գյուղական համայնքի իրր թե սոցիալիստական բնութեան մասին յեղած հայացքներին: Նրանք ապացուցում եյին, թե կոոպերացիան կապիտալիզմի պայմաններում «սոցիալիստական է»: Եսերներն առաջադրեցին «հողի սոցիալիզացիայի» բուրժուական ծրագիրը, վորը կայանում էր նրանում, վորպես-զի ամբողջ հողը բաժանվի գյուղացիութեան մեջ, պահպանելով գործիքների և արտաբուրժուային միջոցների մասնավոր սեփականությունը գյուղում, պահպանելով կապիտալիզմը քաղաքում: Լենինը, մերկացնելով եսերներին, մատնանշում էր, թե նրանք խաբում եյին գյուղացիներին, իրենց ծրագրերն անվանելով «հողի սոցիալիզացիա», վորովհետև այն, ինչ առաջարկում են եսերները, իրականում կհասցնի բուրժուական սեփականութեան ամբողջմանը գյուղում: Լինելով բուրժուական դեմոկրատիայի ձախ Ֆրակցիան, եսերներն իրենց վնասակար տեղորիստական պրակտիկայով «լուրջ վնաս են հասցնում շարժմանը, քայքայելով սոցիալիստական աշխատանքի անխզելի կապը հեղափոխական գաղափարի մասսայի հետ»²:

1 Լենին, Ինչ անել, հայ. հրատ., էջ 106:

2 Լենին, Ինչու սոցիալ-դեմոկրատիան պետք է վճռական ու անողոք պատերազմ հայտարարի սոցիալիստ-հեղափոխականներին, Յերկ. հ. V, էջ 433:

Լենինը «Հեղափոխական աշխատյութից», «Ինչու սոցիալ-դեմոկրատիան պետք է վճռական և անողոք պատերազմ հայտարարի սոցիալիստ-հեղափոխականներին» հոդվածներում և «Искра»-յում գետեղված այլ հոդվածներում ցույց տվեց, վոր եսերները աշխատյութիստներ են, բուրժուական դեմոկրատիայի մանր-բուրժուական ինտելիգենտական Ֆրակցիա, վորը միացնում է հին-պայտեական նարոդնիկութունը ռեվոլյուցիոնիզմի հետ:

Հեղափոխական մարքսիզմի թշնամիների դեմ մղած համառ պայքարում ստեղծվում եյին իսկրայական կազմակերպութունները տեղերում: Ամուր լենինյան-իսկրայական կազմակերպութունն առաջացավ Անդրկովկասում, վորի հիմնադիրն է հանդիսանում ընկեր Ստալինը: Ընկեր Ստալինի ղինակիցներն եյին՝ Մ. Յիսակայան, Վ. Կուռնատովսկին, Վ. Կեցխովսկին, Ա. Ծուլուկիձեն: 1901 թ. նոյեմբերի 11-ին կուսակցական կոնֆերենցիայում ստեղծվում է Թիֆլիսի լենինյան-իսկրայական կոմիտեի ընկեր Ստալինի գլխավորութեամբ: 1901 թ. դեկտեմբերի 31-ին ընկեր Ստալինի նախաձեռնութեամբ և ղեկավարութեամբ ստեղծվում է Բաթումի լենինյան-իսկրայական կոմիտեն: 1901 թիվին ընկեր Ստալինի աշակցութեամբ Վ. Կեցխովսկին Բաթումում կազմակերպում է ընդհատակյա տպարան: Այդ տպարանում 1901 թ. սեպտեմբերին լույս տեսավ «Բրձուլա» («Պայքար») լրագրի առաջին համարը—Թիֆլիսի լենինյան-իսկրայական կազմակերպութեան որդանը: 1903 թ. փետրվարին ստեղծվեց «Կովկասի սոցիալ-դեմոկրատական բանվորական միութունը»:

1904 թ. սկզբից Ռուսաստանում իսկրայականների տարած աշխատանքի արդյունքը յեղավ այն, վոր «Искра»-յին միացան Մոսկվայի, Նիժեգորոդի, Տվերի, այնուհետև Պետերբուրգի և այլ կոմիտեներ: «Искра»-յին միացած մի շարք տեղական կոմիտեներ հիշատակում եյին իրենց անհամաձայնութունը «Искра»-յի հետ գյուղացիութեան զնահատման, կազմակերպական հարցում, և այլ կարևոր հարցերում (որինակ, «Южный рабочий», հանքադործարանային կոմիտե և ուրիշ.): Սակայն կոմիտեների մեծամասնութունը հաստատորեն կանգնեց «Искра»-ն լիովին ընդունելու ճանապարհին: Յեւ յեթե Լենինը 1902 թ. խիստ ընդդիմացավ կուսակցութեան համագումարի վաղաժամ հրավիրմանը, մի համագումար, վորը ուզում եյին հրավիրել 1902 թ. ամառը բունդականներն ու ռաբոչեդեյականները, քանի վոր սահմանադատումն ուղորտունիտների հետ չէր վերջացել, ապա այժմ

«Искра»-յի հաղթութունից հետո համագումարը չափազանց անհրաժեշտ էր:

Ստեղծվեց Կազմակերպական կոմիտե՝ կուսակցութայն յերկրորդ համագումարը հրավիրելու համար:

«Искра»-ն, նրա կազմակերպական պլանը մեծ հաղթանակ տարան: Ընկեր Ստալինը գրում էր. «Այդ պլանի հաղթութունը հիմք դրեց այն միաձուլլ ու կոփված կոմունիստական կուսակցութայն, վրրի հավասարը աշխարհը չգիտե՞»¹:

ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՉԸ «ИСКРА»-ՅԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ

Արդեն 1901 թ. ամառը Լենինի և «Искра»-յի խմբագրութայն մյուս անդամների միջև լուրջ տարաձայնություններ հայտարարվեցին դեպի լիբերալ բուրժուազիան ունեցած վերաբերմունքի առթիվ: Լենինը մերկացնում էր լիբերալ դարձած նախկին լեղալ մարքսիստի, բուրժուական «Освобождение» որդանի խմբագիր Պ. Ստրուվեյի ստորաքարշությունը ցարիզմի առաջ: Ստրուվեն առաջադրեց ռեֆորմիստական «Իրավունք և իշխանական զեմստովո» լոզունգը և այն հակադրեց «Կորչի՛ ինքնակալությունը» հեղափոխական լոզունգին: Լենինը Ստրուվեյի դեմ գրեց «Ջեմստովոյի հալածիչները և լիբերալիզմի հաննիբալները» հոդվածը, վրտեղ մերկացնում էր ռուսական լիբերալիզմի վախկոտությունն ու փտածությունը:

Պլեխանովն ու Ակսերոզը հանդես յեկան Լենինի հոդվածի դեմ, խորհուրդ տալով նրան լիբերալի խաթրին չգիպչել: Այս վեճերի մեջ են գտնվում լիբերալ բուրժուազիայի հանդեպ ունենալիք վերաբերմունքի ապագա յերկու՝ բուլչեիկյան ու մենչևեիկյան տակտիկաների արմատները:

Հիշեցնենք, վր դեպի արտասահման կատարած դեռևս իր առաջին ուղևորութայն ժամանակ (1895 թ.) Լենինը ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ բաղխվեց լիբերալների տարբեր դնահատման հետ: Պլեխանովը նրան ասում էր. «Ինչ չըլում էք դեպի լիբերալները ձեր մեջքը, իսկ մենք՝ մեր դեմքը»:

1902 թ. հունվարին «Искра»-յի խմբագրութայն մեջ սկսվե-

¹ Ստալին, Լենինի մասին, հայ. հրատ., էջ 8, 1930:

ցին խոշոր տարաձայնություններ ծրագրային հարցերի շուրջը:

Կուսակցութայն ծրագրի վրա Լենինն սկսել էր աշխատել, ինչպես հայտնի յե, 90-ական թվականների կեսերից: Ծրագրի նախագիծը Լենինը կազմել էր դեռևս բանտում, «նախնական կալանքի տանը», Պետերբուրգում: Յերբ «Искра»-յի խմբագրութայն մեջ սկսվեց ծրագրի քննարկումը, պլեխանովյան «Освобождение труда» խմբի մասնակիցներից կազմված խմբագրութայն մեծամասնությունը պաշտպանեց Պլեխանովին, և քննարկութայն հիմքում դրվեց 1901 թ. վերջին նրա կազմած ծրագրի նախագիծը: Պլեխանովն սպառնում էր պառակտումով, յեթե հիմքում դրվեր 1902 թ. սկզբին Լենինի ներկայացրած ծրագրի նախագիծը: Յերկու նախագիծերը համաձայնեցնելու բոլոր փորձերն ինքնասիրահար Պլեխանովի դիմադրութայնն էյին հանդիպում:

Լենինը տեսնում էր պլեխանովյան նախագիծի հակայական սկզբունքային թերությունները: Նա հասկանում էր ծրագրի «ակադեմիական» պլեխանովյան նախագիծի ամբողջ անհամապատասխանությունը Մարքսի հեղափոխական ուսմունքի վրդուն և ռուսական հեղափոխական բանվոր դասակարգի պայքարի պայմաններին: Նա ծրագրի Պլեխանովի նախագիծին հակադրում էր իր նախագիծը: Ծրագրի պլեխանովյան նախագիծ նրա քննադատությունը ուժի ու նշանակութայն տեսակետից կարող է հավասարվել թերևս միայն Մարքսի ու Ենգելսի տված՝ 1875 թ. գերմանական սոցիալ-դեմոկրատիայի Գոթայի ծրագրի քննադատությանը:

Պլեխանովյան սխալների նշանակությունը զնահատելու համար բավական է հիշեցնել, վր ծրագրի յերկրորդ նախագիծում վոչինչ չէր ասված մարքսիզմի այնպիսի կարևորագույն պահանջի մասին, ինչպիսին է պրոլետարիատի դիկտատուրան: «Որ դեպ: Նախագիծում բաց է թողած պրոլետարիատի դիկտատուրայի վրա մատնանչելը»-գրում էր Լենինը: Նա պնդում էր, վր մտցվի հեղափոխական մարքսիզմի հիմնական ծրագրային այս պահանջը. «Պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունն ընդունելը ամենատարաբնույթ և անխզելի կերպով կապված է «Կոմունիստական Մանիֆեստի» այն դրույթի հետ, թե միմիայն պրոլետարիատն է միակ իսկպես հեղափոխական դասակարգը»¹:

Լենին, Գլխագրութայնի Պլեխանովի ծրագրի յերկրորդ նախագիծի աթիվ, Յերկ., հ. V, էջ 29:

11-2853894



Լենինը սուր քննադատութեան յենթարկեց կապիտալիզմի զարգացման ընթացքի պլեխանովյան շարադրանքը: Պլեխանովը, մի կողմից, նշանակալից չափով հարթում էր կապիտալիզմի զարգացման դրական տենդենցները, իսկ, մյուս կողմից, կոծկում էր Ռուսաստանում կապիտալիզմի այդ զարգացման առանձնահատկությունները: Դրա համար էլ Լենինն անընդունելի յեր համարում պլեխանովյան ծրագրի ամբողջ տիպը: Լենինը համարում էր այդ նախադիժը վոչ թե գործնականորեն պայքարող կուսակցութեան ծրագիր, այլ, այլեւի շուտ՝ ծրագիր առաջին կուրսի ուսանողների համար, «վորտեղ խոսում են առհասարակ կապիտալիզմի մասին, բայց դեռ վոչ ուսուսկան կապիտալիզմի մասին»¹:

Լենինը պահանջում էր, վորպեսզի կուսակցութեան ծրագիրը տար ուսուսկան կապիտալիզմի հարցի միանգամայն կոնկրետ դիրքորոշում: «Այդ վոչ թե հեղափոխական կուսակցութեան լեզու յե, այլ «Русские Ведомости»-յի լեզու յե: Այդ վոչ թե սոցիալիստական քարոզի տերմին է, այլ վիճակագրական ժողովածուի տերմին»², — գրում էր Լենինը:

Պլեխանովի յերկրորդ նախագծի մասին տված կարծիքում Վլադիմիր Իլյիչը միազումարեց իր թեորետիկական և քաղաքական առարկությունները, հանգեցնելով նրանց չորս սկզբունքային կետի: Պետք է Լենինի այդ առարկությունները բերել ամբողջովին, վորովհետեւ նրանք այլեւի պարզորեն և լիովին են բացահայտում Պլեխանովի սխալ հայացքների մենչևելկյան եյությունը, ցույց են տալիս, վոր բանը Պլեխանովի առանձին սխալները չեն, այլ հայացքների այն սխտեմը, վորոնք այլեւի ուսուսկան յեն սկսում դրսևորել նրա ոպորտունիստական եյությունը:

«Ամբողջ նախագիծը թափանցված է չորս հիմնական թերություններով, վորոնք, իմ կարծիքով, դարձնում են այն միանգամայն անընդունելի»:

1) Կապիտալիզմի բնութագրութեանը վերաբերող կարևորագույն բաժնի ձևակերպման իր յեղանակով այդ նախագիծը տալիս է վոչ թե միանգամայն վորոշակի կապիտալիզմի միանգամայն ուսուսկան արտահայտությունների դեմ կոլոզ պրոլետարիատի ծրագրի:

¹ Լենին, Դեկտեմբրյաներ Պլեխանովի ծրագրի յերկրորդ նախագծի ամբողջ, Յերկ., 4. V, էջ 18:

² Նույն տեղում, էջ 23:

գիր, այլ առհասարակ կապիտալիզմին նվիրված տնտեսական դասագրքի ծրագիր:

2) Առանձնապես անպետք է ծրագրերը ուսուսկան պրոլետարիատի կուսակցութեան համար, վորովհետեւ ուսուսկան կապիտալիզմի եվոլուցիան, ուսուսկան կապիտալիզմի միջոցով առաջացած հակասություններն ու հասարակական թշվառությունները համարյա միանգամայն տնտես են առնված և մթադնված են շնորհիվ կապիտալիզմի առհասարակ բնութագրելու միևնույն սխտեմի: Ռուսական պրոլետարիատի կուսակցութեանը պետք է իր ծրագրում ամենաանբեկիտ կերպով շարադրի իր մեղադրանքը ուսուսկան կապիտալիզմին, իր կովի հայտարարումը ուսուսկան կապիտալիզմին: Այդ անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, վոր ուսուսկան ծրագրին այդ տեսակետից չի կարող յեվրոպական ծրագրերի հետ միակերպ լինել. այդ վերջինները խոսում են կապիտալիզմի և բուրժուական հասարակութեան մասին, առանց մատնանշելու, վոր այդ հակացողությունները կիրառելի յեն թե՛ Ավստրիայի, թե՛ Գերմանիայի վերաբերմամբ և այլն, վորովհետեւ այդ ինքնըստինքյան հասկանալի յե: Ռուսաստանի վերաբերմամբ այդ բանը չի կարելի յենթագրել:

Իսկ ոճիքն աղատել նրանով, վոր կապիտալիզմին «իր զարգացած ձևով» առհասարակ աչքի յե ընկնում այսօրն հատկություններով, — իսկ Ռուսաստանում կապիտալիզմը «գերիշխող է դառնում», կնշանակի խուսափել այն կոնկրետ մեղադրանքից և պատերազմի հայտարարումից, վորն ամենից այլեւի կարևոր է գործնականորեն կովոզ կուսակցութեան համար:

Այդ պատճառով նախագիծը չի հասնում ծրագրի գլխավոր նպատակներից մեկին, այն է՝ ուսուսկան կապիտալիզմի բոլոր զանազանակերպ արտահայտությունների առթիվ կուսակցութեանը դիրեկտիվ տալ նրա ամենորյա պրոպագանդայի ու ագիտացիայի համար:

3) Նախագիծում միջանի կարևորագույն կետերի տրված է այնպիսի սխալ ձևակերպում, վորն անխուսափելիորեն կառաջացնի մի շարք ամենավտանգավոր թյուրիմացություններ և մեզ համար կղձվարացնի մեր թեորիական կոլիմ ու պրոպագանդան: Այսպես, որինակ, խոշոր արտադրութեան աճումը սահմանափակված է միմիայն «արդյունաբերական» ձեռնարկություններով: Գյուղատնտեսական կապիտալիզմի եվոլուցիան չգիտես ստվերարկված է, թե բոլորովին անտես առնված: Այնուհետև, «պրո-

լետարիատի դիկտատուրայի» տեղը դրավեց «Հեղափոխութիւնը, վոր պիտի կատարի այն պրոլետարիատը, վորը պաշտպանութիւն եր գտնում կապիտալիստական շահագործումից տառապող բնակչութիւնն այլ խավերի կողմից», և նույնիսկ պրոլետարիատի դասակարգային կռիւի փոխարեն դրված է «աշխատավոր և շահագործվող մասսայի կռիւը»: Այդպիսի ձեւակերպումը հակասում է «Ինտերնացիոնալի» այն հիմնական սկզբունքին, թե՛ «բանվոր դասակարգի ազատազրուծմը կարող է միմիայն իր՝ բանվոր դասակարգի գործը լինել»: Բացի պրոլետարիատից, «աշխատավոր և շահագործվող մասսայի» մյուս մասը (այսինքն՝ գլխավորապես մանր արտադրողները) միմիայն մասամբ է հեղափոխական բուրժուազիայի դեմ մղած իր կռիւում: Հատկապես նա հեղափոխական է միմիայն այն ժամանակ, յերբ նա, «նկատի ունենալով պրոլետարիատի շարքն անցնելը», «կանգնում է պրոլետարիատի տեսակետի վրա» (Կոմունիստական Մանիֆեստ): Իսկ մանր արտադրողների ռեակցիոնութիւնը նախագծում բուրժուային չէ սովերանիզմը, այնպես վոր ը ն դ և ա ն ր ա պ ե ս և ա մ ք ո ղ ջ ա պ ե ս ա ու ա ծ՝ պրոլետարիատի վերաբերմունքը դեպի «աշխատավոր և շահագործվող մասսան» միշտ չի պատկերացված: Որինակ՝ նախագիծն ասում է. «սրվում է նրա (աշխատավոր և շահագործվող մասսայի) կռիւը և ամենից առաջ նրա առաջավոր ներկայացուցչի՝ պրոլետարիատի կռիւը»: Մանր արտադրողների «կռիւի սրումը» արտահայտվում է թե՛ հակասեմիտիզմում, թե՛ ցեղարկումում, թե՛ գյուղացիական միութիւններում ընդդէմ բատրակներին, թե՛ նույնիսկ սոցիալական Ժիրոնայի կռիւում ընդդէմ Լեոնին: Վոր ամբողջ աշխատավոր և շահագործվող մասսայի ներկայացուցիչը պրոլետարիատն է, այդ բանը պետք է արտահայտվի ծրագրում նրանով, վոր մենք մեղադրում ենք կապիտալիզմին մ ա ս ս ա ն Ե ր ի ն ա ղ ք ա տ ա ց ն ե լ ու մ Ե ջ (և վոչ թե միայն բանվոր դասակարգին աղքատացնելու մեջ), «աշխատավոր բնակչութիւնն ե՛լ ավելի լայն խավերին» (և վոչ բանվոր դասակարգին) գործազուրկ անելու մեջ:

4) Նախագիծը մշտապես շեղվում է ծրագրից բուն իմաստով կոմունարիաների կողմը: Ծրագիրը պետք է տա համառոտ, վոչ մի ավելորդ բառ չպարունակող դրույթներ, թողնելով բացառութիւնները կոմունարիաներին, բրոչյուներին, ագիտացիային և այլն: Այդ պատճառով էլ Ենդելսը միանգամայն արգարացել կերպով մեղադրել է Երֆուրտի ծրագիրն այն բանում, վոր նա

իր յերկարութեամբ, մանրամասնութեամբ և կրկնութիւններով շեղվում է կոմունարիաների կողմը»¹:

Լենինը պայքարում էր Պլեխանովի վոչ պարզ, ճապաղ, «կաուչուկե» ձեւակերպումների դեմ, վորոնք զգալի կերպով սողանցեց Եյին թողնում ամեն տեսակ ոպորտունիստների համար:

Ծրագրի պլեխանովյան նախագծում փոխանակ պարզ մատնանշումներ անելու՝ կապիտալիզմի որով մանր սեփականատերերի քայքայման ու կործանման մասին, արված էյին հետևյալ վերապահումները. մանր սեփականատերը «ավելի կամ պակաս լրիվ, ավելի կամ պակաս բացահայտ, ավելի կամ պակաս ծանր կախման մեջ է ընկնում կապիտալից»: Այդպիսի ձեւակերպումներ, Լենինի կարծիքով, «կարծես թե դիտմամբ էյին ընտրված, վորպեսզի ընթերցողն այնպիսի տպավորութիւն ստանա, թե իր բնութագրվող պրոցեսը սուր, վորոշակի վաչկնով չվերջացող, անհիմնադաշին պրոցես է»²:

Լենինը շատ սուր կերպով էր քննադատում պլեխանովյան ձեւակերպումները, վորոնք վորոշում էյին պրոլետարիատի և մանր բուրժուազիայի փոխհարաբերութիւնները: Պլեխանովի մոտ սահմանադաւում չէյին պրոլետարիատի հեղափոխականութեան պատճառները և գյուղացու, տնայնագործի, արհեստավորի հեղափոխականութեան պատճառները, իսկ այդպիսի սահմանադատումը Լենինը համարում էր խիստ անհրաժեշտ: Անհրաժեշտ էր դատել պրոլետարիատը վորպես ամենահեղափոխական ուժ, վորպես զեկավարող ուժ հեղափոխական պայքարում: Առանձնացվեց հանձնաժողով և մշակվեց ծրագրի հանձնաժողովային մի նախագիծ, վորը Լենինը շարունակում էր սուր կերպով քննադատել:

Ծրագրի հանձնաժողովային նախագծի առթիւ արած լրացուցիչ դիտողութիւններում Լենինը գրում էր. «Անպայման ս կ գ ր ի ց պետք է անջատել մեզ ամենքից, դատել միայն մեկ բան, միակը և բ ա ց ա ո ի կ ը՝ պրոլետարիատը, — իսկ հետ արդեն հայտարարել, թե պրոլետարիատն ամենքին կազատի, ամենքին կանչում է, ամենքին հրավիրում է»³:

1 Լեոնին, Կարծիք Պլեխանովի յերկրորդ նախագծի մասին, ընտիր Յերկեր, հայ. հրատ., Կ. I, էջ 601—603:
 2 Լեոնին, Դիտողութիւններ Պլեխանովի ծրագրի յերկրորդ նախագծի առթիւ: Յերկ., Կ. V, էջ 23:
 3 Լեոնին, Լրացուցիչ դիտողութիւններ հանձնաժողովային նախագծի առթիւ, Յերկ., Կ. V, էջ 48:

Այդպիսի հարցադրումը Լենինը անհրաժեշտ եր համարում պաշտպանել՝ ի շահ մարքսիզմին թշնամի քննադատության դեմ մղվող պայքարի:

«Մեզ մոտ Ռուսաստանում, — գրում եր Լենինը, — «աշխատավոր և շահագործվող մասսայի» դիվային տանջանքները վոչ մի ժողովրդական շարժում չեյին առաջացնում, մինչև վոր «մի բուն» ֆարբիկա- գործարանային բանվորներ չսկսեցին պայքարը, դասակարգային պայքարը: Յեվ մ ի մ ի ա յ ն ա յ ն ա յ ն «մի բուն» 'ե յերաշխավորում այդ պայքարը վարելը, շարունակելը, լայնաց- նելը: Հենց Ռուսաստանում, վորտեղ թե՛ քննադատներն են (Բուլ- գակով) մեղադրում սոցիալ-դեմոկրատներին «գյուղացիատեցու- թյան» մեջ, թե՛ սոցիալիստ-հեղափոխականներն են բղավում դասակարգային պայքարի հասկացողութունը «բ ո լ ո թ աշ- խատավորների ու շահագործվողների պայքար» հասկացողու- թյամբ փ ո խ ա բ ի ն ե լ ու անհրաժեշտության մասին... Հենց Ռուսաստանում մենք պետք է սկզբից լույ մ ի մ ի ա յ ն գ պրոլետարիատի միմիայն դասակարգային պայքարի ամենասուր վորոշմամբ սահմանադատենք մեզ այդ ամբողջ տականքից, — իսկ հետո արդեն հայտարարենք, թե մենք ամենֆին կոչ ենք անում, ամեն ինչ կվերցնենք, ամեն ինչ կանենք, ամեն ինչույ կընդար- ձակենք»¹:

Լենինի այդ պայքարն ընդդեմ շատ խոշոր թեորիական ու տակտիկական մենչևիկյան սխալների, վորոնք կուտակվել էյին Պլեխանովի ծրագրի նախագծում, հասցրեց այն բանին, վոր ծրագիրը նշանակալիորեն լավացավ, չնայած «Искра»-յի խմբա- գրության անդամների դիմադրությանը, վորոնք պաշտպանում էյին Պլեխանովին և «չեյին ցանկանում նրան նեղացնել»:

Լենինի սկզբունքային առարկությունների վրա հիմնված մի շարք ուղղումներ ընդունվեցին և մտան այդ այսպես կոչված հանձնաժողովային նախագծի մեջ: «Կուսակցական ծրագրի պատ- մության շուրջը» հոգվածում, վորը հրատարակվեց 1905 թ. մարտի 10-ին «Вперед»-ի № 11-ում, վլադիմիր Իլյիչը պատմում է, թե ծրագրի առթիվ արած իր առարկությունների վոր կետերը նրան հաջողվեց պաշտպանելու: Այդ իսկ հոգվածում Լենինն պատմում եր. «1) ... կատարյալ անճշտություն է Պլեխանովի այն

պնդումը, իրր մեր հարաբերությունները սառեցին «ի՞նչ անել»-ի պատճառով: Այդ սառնությունը ծրագրի մասին յեղած վեճերի, ժամանակ վեցյակը կիսվելու պատճառով եր. 2) ... յես պաշտ- պանում էյի և պատշպանեցի այն բանը, վորպեսզի ծրագրի մեջ մտցվի՝ խոշոր արտադրության կողմից մանր արտադրությանը վանելու մասին յեղած թեղիսը: Պլեխանովն ուղում եր սահմա- նափակվել հայտնի «ավելի կամ պակաս»-ի վորով մի ճապող արտահայտությամբ, 3) ... յես պաշտպանում էյի և պաշտպա- նեցի «աշխատավոր և շահագործվող մասսա» տերմինը «պրոլե- տարիատ» տերմինով փոխարինելն այնտեղ, վորտեղ խոսքը մեր կուսակցության դասակարգային բնույթի մասին եր. 4) ... Պլե- խանովը, յերբ յես և վեցյակում յեղած իմ կողմնակիցները հան- դիմանում էյինք նրան այն բանում, թե նրա ծրագրի նախագծում վոչ-բավականաչափ է արտահայտված կուսակցության պրոլե- տարական բնույթը, պաշտպանվում եր հակա-մեղադրանքով, թե յես կուսակցության պրոլետարական բնույթը Մարտինովի պես եմ հասկանում»¹:

Միանգամայն պարզ է ծրագրի մասին Լենինի և Պլեխանովի վիճարանության սկզբունքային բնույթը: Լենինի հայացքները հանդիսանում են բոլլեիզմի սկզբունքային, թեորիական, ծրա- գրային ու տակտիկական հիմքը, բոլլեիզմ, վորն իրենից ներ- կայացնում է Մարքսի հեղափոխական հայացքների հետագա զարգացումը. ծրագրի մասին յեղած հայացքների պլեխանովյան սխալման իր սաղմում պարունակում եր ուսական մենչևիզմի ծրագրային-տակտիկական յերակետային հայացքները:

II Համագումարին առաջադրված ադրաբային ծրագրի հեղի- նակը Լենինն եր: Այն հիմնական պահանջը, վորն առաջ քաշեց Լե- նինն ազրարային ծրագրում, այն հողակտրանքները գյուղացիներին վերադարձնելու պահանջն եր, վորոնք ծառայում էյին վորպես վերավածատերերի կողմից գյուղացիներին ստրկացնելու և ճոր- տատիրության մնացորդները պահպանելու միջոց: Հենց ճորտա- տատիրության մնացորդները վոչնչացնելու և գյուղում դասակար- գային պայքարի ազատ զարգացման նպատակով կուսակցություն- նը պետք է պնդեր հողակտրանքները գյուղացիներին վերադարձ- նելու վրա: Հողակտրանքների չափի մասին կարելի յե դատել

¹ Լեոնիձ, Լրացուցիչ դիտողություններ հանձնաժողովային նախագծի առթիվ, Յերկ., 4. V, էջ 48—49:

¹ Լեոնիձ, Կուսակցության ծրագրի պատմության շուրջը, Յերկ. 4. VII, էջ 160:

հետևյալ տվյալներով. 15 սևահողային նահանգներում 1861 թ. ակֆորմից հետո կտրեցին դյուղացիներին հողի 9,9%-ը, 21 սևահողային նահանգներում՝ 26,2%, ըստվորում Խարկովի նահանգում՝ 31%, Պոլտավայի նահանգում՝ 40% և Սամարայի նահանգում՝ 48%: Հողակտրանքները դյուղացիներին վերադարձնելը ճիշտ նույնպես ծառայում էր նաև իբրև դյուղացիական շարժման աշխուժացման միջոց: Սակայն հողակտրանքները դյուղացիներին վերադարձնելը Լենինը պատկերացնում էր իրեն միայն վորպես անցման միջոց, վորպես դուռ. այդ դռնով ամենից առաջ պետք է անցնել նրա համար, վորպեսզի առաջ գնանք, նրա համար, վորպեսզի բաց, լայն ճանապարհով գնանք միևնչև վերջը, մինչև ամբողջ աշխատավոր բանվոր ժողովրդի լիակատար ազատազրույթը Ռուսաստանում:

Լենինը վորոչ պայմաններում, հեղափոխության հետագա զարգացման ժամանակ հնարավոր էր համարում ամբողջ կալվածատիրական հողը բռնազրավելու և այն ազգայնացնելու պահանջ առաջադրել: «Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ազրարային ծրագիրը» հողվածում Լենինը գրում էր. «Այլ բան է հողի ազգայնացումը: Այս պահանջը (յեթե այդ հասկանանք բուրժուական, և վոչ թե սոցիալիստական իմաստով) իսկպես հողաչարանքները վերադարձնելու պահանջից «ավելի հեռու յե գնում», և սկզբունքով մենք լիովին բաժանում ենք այդ պահանջը: Վորոչ հեղափոխական մոմենտում մենք, հասկանալի յե, չենք հրաժարվի այդ պահանջն առաջադրելուց»¹:

Լենինի առաջարկության դեմ դուրս յեկան դեռևս «Искра»-յի խմբագրության մեջ Պլեխանովը, Ակսելրոդը և Մարտովը, վորոնք անթույլատրելի էլին համարում հողի ազգայնացման պահանջ առաջադրել բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ: Այստեղ էլ նշվեց դարձյալ Լենինի և խմբագրության մնացած անդամների տարբեր վերաբերմունքը դեպի հեղափոխության կարևորադույն հարցերից մեկը՝ դյուղացիության նկատմամբ ունենալիք վերաբերմունքը: Լենինն արդեն այն ժամանակ, առաջին հեղափոխության նախորդակին, բանվորական կուսակցության իսկական ծրագիրը համարում էր հողի ազգայնացման պահանջը: Լենինը հողակտրանքները համարում էր լուկ առաջին քայլը դեպի ազգայնացման ուղին:

1 Լենին, Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ազրարային ծրագիրը, հայ. հրատ., Ընտիր Յերկեր, 4. I, էջ 688:

Լենինը հողակտրանքների ծրագիրն առաջադրում էր վորպես մի պահանջ, վորն ընդունակ լիներ այն ժամանակ հրահրել դյուղացիական շարժումը, ներքաշել այնտեղ դյուղի ամենաբազմազան խավերը: Բայց արդեն այն ժամանակ Լենինը հայտարարում էր, թե «մեր ազրարային ծրագիրն այդ պատճառով հաշի յե առնված գործնականորեն գլխավոր ամամբ անմիջականորեն-մուտակ ապագայի համար, միևնչև ինքնակալության տապալման ժամանակաշրջանի համար: Քաղաքական հեղաշրջումը Ռուսաստանում համենայն դեպս և անխուսափելիորեն իր հետևից կբերի մեր ամենահետամնաց ազրարային կարգերի այնպիսի արմատական բարեփոխումներ, վոր մենք այն ժամանակ այնպայման հարկ կզգանք վերանայել մեր ազրարային ծրագիրը»¹:

Վիճարանություններ տեղի էլին ունենում նաև հողի հեղաշրջման հարցի առթիվ: Լենինն անհրաժեշտ էր համարում առաջադրել կոնֆիսկացիայի, այսինքն՝ հողակտրանքները դյուղացիներին անվճար վերադարձնելու պահանջ: Իսկ Պլեխանովը պաշտպանում էր հողակտրանքների մի մասի հետգնումը:

Այսպիսով, ծրագրային կարևորագույն հարցերի շուրջը— պրոլետարիատի դիկտատուրայի, կապիտալիզմի բնութագրման, բանվոր դասակարգի և մյուս դասակարգերի փոխհարաբերությունների, բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերությունների, լիբերալներին ցույց տալիք վերաբերմունքի, ազրարային հարցի—այս բոլոր կարևորագույն հարցերի շուրջը «Искра»-յի խմբագրության մեջ գոյություն ունեյին խորը տարածայնություններ: Յեվ Լենինի պայքարը հանուն այս հարցերի բոլոր լեկիյան դրմանը կուսակցության ծրագրում՝ ուներ խոշոր սկզբունքային նշանակութուն: Լենինն ստիպված էր բոլոր այս հարցերի առթիվ պայքար մղել «Искра»-յի խմբագրության բոլոր անդամների դեմ, յերբեմն-յերբեմն միայն պաշտպանութուն գտնելով խմբագրության այս կամ այն անդամի կողմից առանձին ձևակերպումների առթիվ: «Искра»-յի խմբագրության մեջ հաջողվեց ընդունել մի ծրագիր, վորն առաջադրված էր կուսակցության II համագումարին: Սակայն այդ բնավ չի կարող սքողել այն փաստը, վոր «Искра»-յի խմբագրության մեջ պայքարում էլին յերկու դիժ. Լենինյան—բոլշևիկյան և սլեխանովյան—մենշևիկյան գծերը:

1 «Լենինյան ժողովածու», III, էջ 334:

Այսպիսով դեռ մինչև II համազումարը Լենինը հսկայական աշխատանք կատարեց մի այնպիսի ծրագիր մշակելու գործում, վորն ընդունելի լինե՞ր հեղափոխական մարքսիզմի կուսակցու-թյան համար:

ՈՍԴԲԿ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1903 թ. հուլիսի 17-ին Բրյուսելում Պլեխանովի ներածական ճառով բացվեց ՌՍԴԲԿ II համազումարը: Համազումարի նա-խորդակին Լենինը «II հերթական համազումարի» մանրամասն «ծրագիր» մշակեց: Իսկրայական ծրագիրը, տակտիկան և կազ-մակերպական սլանը պետք է դրվեյին կուսակցության II համա-զումարի աշխատանքների հիմքում:

Համազումարին ներկայացված էյին չորս խմբավորումներ, «ամուր» իսկրայականներ (լենինյաններ)—20 պատգամավոր և 24 ձայնով, «մեղմ» իսկրայականներ (Մարտով, Տրոցկի, Ակ-սելրոզ և ուրիշներ)—9 ձայնով, «ճահիճ» («Южный рабочий»-ի ներկայացուցիչներ և ուրիշներ)—10 ձայնով և հակաիսկրայա-կաններ—8 ձայնով (3 եկոնոմիստ և 5 բունդական):

Համազումարում առաջացած հետևյալ խմբավորումնե-րին՝ 1) մեծամասնության իսկրայականներ, 2) փոքրամասնու-թյան իսկրայականներ, 3) «կենտրոն» և 4) հակաիսկրայական-ներ—Լենինը զնահատում էր «խմբերի մեջ գոյություն ունեցող յերանգների եյության» տեսակետից և տալիս էր այսպիսի աս-տիճանավորություն. «1) հետևողական հեղափոխական սոցիալ-դեմոկրատներ, 2) փոքրիկ ոպորտունիստներ, 3) միջակ ոպոր-տունիստներ և 4) մեծ ոպորտունիստներ (մեր ուսական մասըչ-տարով մեծ)»¹:

«Искра»-յի խմբագրության կողմից առաջադրված կուսակ-ցության ծրագիրը, վորը մշակվել էր խոշոր դեմոկրատիայի ու լենինյան ուղղումներն ընդունելու հետևանքով, միջոգչային սոցիալ-դեմոկրատիայի ծրագրերից ամենալավն էր: Մրաչրում պարզ ասված էր, վոր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունն իրեն խնդիր է դնում սոցիալա-կան հեղափոխությունը և վոր «այդ սոցիալական հեղափոխու-

թյան անհրաժեշտ պայմանն է պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն՝ պրոլետարիատի կողմից այնպիսի քաղաքական իշխա-նություն նվաճելը, վորը թույլ կտա նրան ճնշելու շահագործող-ների ամեն մի դիմադրություն»¹:

Պրոլետարիատի դիկտատուրայի նվաճմանը պետք է նախոր-դել պայքարը՝ հանուն ցարական ինքնակալության տապալման, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակը: «Ա-մուր» իսկրայականներն այն ժամանակ էլ, II համազումարում, դեմոկրատական խնդիրների իրականացումը դիտում էյին վոր-պես մի միջոց, վորը թեթևացնում է սոցիալիստական հեղափո-խության, պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող հե-տադա պայքարը: Այս միտքն արտահայտեց նաև Պլեխանովը, վորը կուսակցության II համազումարում պաշտպանում էր Լե-նինին: «Հեղափոխության հաջողությունը դերադույն որենք է: Յեւ յեթե հեղափոխության հաջողության համար պահանջվի այս կամ այն դեմոկրատական սկզբունքի դործողությունը ժամա-նակավորապես սահմանափակել, ապա այդպիսի սահմանափակ-ման առաջ կանգ առնելը հանցագործություն կլինե՞ր»²: Պլեխա-նովի այս ճիշտ դրույթը ոպորտունիստները դիմավորեցին սվին-ներով: Բայց մենք գիտենք, վոր Պլեխանովը, դատնալով մենչե-վիկ, դավաճանեց այն բանին, ինչ ինքը պաշտպանում էր II հա-մազումարում:

Եկոնոմիստների որդան «Рабочее Дело»-յի խմբագիրներից մեկը, անկեղծ ոպորտունիստ Ակիմովը պահանջում էր ծրագրից հանել պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական պահանջը: «Ամուր» իսկրայականները միահամուռ կերպով խիստ հակահար-ված տվին այդ բերնչտայնականին: Տրոցկին հենց այն ժամանակ, II համազումարում, համերաշխեց Ակիմովի հետ: Տրոցկին հայ-տարարեց, թե պրոլետարիատի դիկտատուրան այն ժամանակ հնարավոր կլինի, յերբ պրոլետարիատն ու կուսակցությունը նույնանալուն առաւել մոտ կլինեն, այսինքն՝ յերբ բանվոր դա-սակարգը կձուլվի կուսակցության հետ և բանվոր դասակարգը յերկրում մեծամասնություն կլինի: Իսկ յերբ այդ տեղի ունենա, ասաց Տրոցկին, այն ժամանակ բուրժուազիայի իշխանությունը հարկավոր չի լինի բռնի կերպով տապալել, հնարավոր կլինի

¹ Լենին, Մի քալ առաջ, յերկու քալ հետ, Յեղի., հայ. հրատ., 4. VI, էջ 384:

¹ Քաղվածում ենք ըստ Լենինի յերկերի հավելվածների հ. V, էջ 381:

² ՌՍԴԲԿ II համազումարի արձանագրությունները, էջ 182:

«Արդյունաբերատի դիկտատուերայի» խաղաղ նվաճումը... Մա տիսլիկ և Ֆորմիզմ էր, սա արդյունաբերատի դիկտատուերայի համար մղվող պայքարից հրաժարումն է: Պատահական չէր, վոր կիսակազմեա, եկոնոմիստ Ակիմովը հայտարարեց, թե ինքը Տրոցկու հետ լիովին համաձայն է «Արդյունաբերատի դիկտատուերայի» վորոշման խնդրում: Ակիմովը II համազումարի մասին իր բրոշյուրում գրում էր. «Տրոցկին արտահայտեց իր հայացքը «Արդյունաբերատի դիկտատուերայի» մասին, վորի հետ յես միանգամայն համաձայն եմ, բայց հատկապես այդ պատճառով յես համարում եմ, վոր մեր ծրագիրը վատ է հաղորդում քաղաքական իշխանության նվաճման վերաբերյալ միտքը»:

Տրոցկին արդեն 1903 թ. արդյունաբերատի դիկտատուերայի թշնամին էր:

«Рабочее Дело»-յի մյուս խմբագիրը՝ Մարտինովը փորձում էր համազումարում խցկել այն ուղորտունիստական թեզը, թե բանվորական շարժման մեջ հարկ չկա սոցիալիստական գիտակցականություն մտցնել, թե այդ բոլորն արդեն կա բանվորական շարժման մեջ: Մարտովը չէր առարկում ուրոշեղելական Մարտինովի այդ ուղորտունիստական դրույթն ընդունելու դեմ: Իսկ համազումարը ձայների մեծամասնությամբ մերժեց այդ դրույթը:

Համազումարում յեյուլթ ունեցող ուղորտունիստները գնդա-կոծում էին նույնպես և ագրարային ծրագիրը: Մարտինովն առաջարկեց հրաժարվել հողակտրանքները վերադարձնելու ծրագրից, վորովհետև «չի կարելի ուղղել պատմական անարդարությունը»: «Ճահճի» ներկայացուցիչ Մախովը հայտարարեց, վոր յեթե հեղափոխությանը մասնակցում է գյուղացիությունը, «սպա այդ արդեն վո՛չ թե հեղափոխություն, այլ ուսակցիա կլինի»:

Բոլոր ուղորտունիստները դեմ էին արդյունաբերատի կողմից գյուղացիական շարժումը դեկավարելուն, վորովհետև դեմ էին արդյունաբերատի հեղեմոնիային բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ, դեմ էին արդյունաբերատի դիկտատուերային:

Հսկայական, սկզբունքային, պատմական նշանակություն ունեյին ազգային հարցի առթիվ յեղած վիճարանությունները II համազումարում: Նշանակալի չափով նրանք յերկու Փրոնտում մղված այն պայքարի նախատիպն էին, վորին մենք կարող ենք հետևել բուլղարիկյան կուսակցության պատմության ամբողջ ըն-

թացքում՝ ինչպես մինչև սոցիալիստական հեղափոխությունը, այնպես էլ արդյունաբերատի դիկտատուերայի ժամանակաշրջանում, չնայած վոր այդ պայքարի կոնկրետ բովանդակությունը փոխվում էր: «Ձախ» թեքումը ներկայացված էր լեհական այն սոցիալ-դեմոկրատիայի անդամներին կողմից, վորը բացասում էր յուրաքանչյուր ժողովրդի սոցիալիստական կուլտուերայի զարգացման անհրաժեշտությունն այնպիսի ձևերով, վորոնք մոտ են այդ ժողովրդի ազգային հատկանիշներին (ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուերա): Լեհական ուղղունիստներն առաջուցում էին, վոր ազգերի ինքնորոշման իրավունքը բուրժուական սահանջ է և վոր այդ սահանջը բոլոր յերկրներին արդյունաբերատի միավորմանը հակառակ է դնում: Լեհինն ու Մախինը, բուլղարիկները, միշտ պաշտպանում էին ազգերի ինքնորոշման իրավունքը՝ վորպես մի սկզբունքային սահանջ, վորի հիման վրա արդյունաբերատն իր կողմն է դրավում ճնշված ազգությունների աշխատավորական լայն մասսաներին:

1917 թ. ապրիլյան կոնֆերենցիայում Լենինը դարձյալ բաղխվեց հեղափոխության համար այդ շատ վտանգավոր լյուքսեմսերուրդյան սխալների հետ, վորոնց այն ժամանակ պաշտպանում էին Փաշիզմի այժմ մերկացված ստոր գործակալները՝ Ռուխարինը, Ռադեկը, Պյատակովը: «1903 թվից սկսած, —ասում էր Լենինը,—յերբ մեր կուսակցության ծրագիրն ընդունվեց, մենք ամեն անգամ լեհերի կողմից հանդիպել ենք կատաղի ուղղիցիայի... Լեհական սոցիալ-դեմոկրատները հեռացան այդ համազումարից՝ դառնելով, վոր ազգերի ինքնորոշման իրավունքը ճանաչելն անընդունելի յե իրենց համար... այդ մարդիկ ուղում են մեր կուսակցության դերը հանդեցնել շովինիստներին»¹:

Այլ թեքումը համազումարում ներկայացված էր բունդականներին կողմից, վորոնք սահանջում էին, վորպեսզի իրենց իրավունք տրվի լինելու հրեական արդյունաբերատի միակ ներկայացուցիչն ամբողջ Ռուսաստանում: Բունդականները արդյունաբերական ազգային քաղաքականությունը նենդափոխում էին բուրժուական քաղաքականությամբ, վորը նպատակ ուներ առանձնացնել մի ազգի աշխատավորներին մյուսից այնտեղ, վորտեղ անհրաժեշտ են միատեղ, կազմակերպված գործողություններ: Հենց բունդականներն էին (իսկ կովկասում՝ նրանց համախոհ՝

1 Լենին, 4. XX, էջ 275:

հայկական «սպեցիֆիկները») պաշտպանում պրոֆմիտթյուններն ըստ ազգերի կազմակերպելը: Բունդականներն առաջարկում էյին կուսակցական կազմակերպությունը կառուցել Ֆեդերացիայի հիմունքներով: Լենինը Բունդի շովինիստական դիրքի առթիվ գրում էր. «Բունդի վո՛չ տրամաբանական, վո՛չ պատմական, վո՛չ էլ նացիոնալիստական փաստարկումները վոչ մի քննադատության չեն դիմանում: Տարնթացություն ժամանակաշրջանը, ուժեղացնելով տատանումները ուսական սոցիալ-դեմոկրատներին շարքերում և առանձին կազմակերպությունների առանձնացածությունը, նույն ուղղությունում և նույնիսկ է՛լ ավելի ուժեղ կերպով ազդել է բունդականների վրա: Փոխանակ իր լոզունդը դարձնելու պայքարն ընդդեմ պատմականորեն առաջացած (և տարնթացության հետևանքով ուժեղացած) այդ առանձնացածություն, նրանք այդ առանձնացածությունը դարձրել են սկզբունք, դրա համար կառչելով ամտոնոմիայի ներքին հակասականության վերաբերյալ սուփեստություններին, հրեական ազդի սինիստական դադարիսին»¹:

Շրջահայելով աղալին հարցում յեղած դանազան թեքումների ու խեղաթյուրումների դեմ մղվող պայքարի ամբողջ ուղին, ընդհուպ մինչև պայքարն ընդդեմ այժմ մերկացված բուրժուական նացիոնալիստների, վորոնք խցկվել էյին ՀամԿ(բ)՝ շարքերը, մենք տեսնում ենք այն վիճաբանությունների հակայական, պատմական նշանակությունը, վորոնք ծավալվել են աղալին հարցի առթիվ 35 տարի սրանից առաջ, ՌՄԴԻԿ II համադումարում:

II համադումարի տակտիկական բանաձևերը, հատկապես եսերներին ու լիբերալներին ցույց տալիք վերաբերմունքի հարցի առթիվ, և այս հարցերի առթիվ տարածայնություններն արդեն այն ժամանակ հայտնաբերեցին տարբեր դասակարգերի՝ հեղափոխության մեջ ունեցած դերի միանգամայն տարբեր գնահատականը բոլշևիկներին ու մենշևիկներին մոտ:

Յերկրորդ համադումարը հաստատեց լենինյան գնահատականը եսերներին՝ վորպես մանր-բուրժուական ավանտյուրիստների կուսակցության, վորպես բուրժուական դեմոկրատիայի ձախ ֆրակցիայի, վորն ընդունակ է ծառայելու միայն լիբերալ բուրժուազիային: Անհատական տեուորի մեթոդը և հեղափոխական ֆրազները, վորոնց միջոցով եսերները քողարկում էյին իրենց

1 Լենին, Բունդի տեղը կուսակցության մեջ, Յերկ., 4. VI, էջ 86:

բուրժուական էյությունը, այդ կուսակցությունը դարձնում էյին «վնասակար վոչ միայն պրոլետարիատի քաղաքական դարգացման համար, այլև արսոլուտիզմի դեմ մղվող համադեմոկրատական պայքարի համար»¹:

«Տեուորի մասին» հատուկ բանաձևում ընդդիմած է անհատական տեուորի վնասակարությունը, տեուոր, վորը բանվոր դասակարգին չեղում է նրա կենսական քաղաքական խնդիրներից, «թե՛ իրենց իսկ հեղափոխականների և թե՛ ընդհանրապես բնալչության մեջ ամենաթյուր պատկերացումներ և տարածում ինքնակալության դեմ մղվող կոլի խնդիրներին ու յեղանակներին մասին»²:

Լիբերալներին ցույց տալիք վերաբերմունքի հարցի առթիվ առաջադրվեց յերկու բանաձև: Այն ժամանակ, յերբ Պլեխանովի—Լենինի բանաձևը տալիս էր ուսական լիբերալիզմի դասակարգային գնահատականը, մերկացնում էր Ստրուվեյի «Освобождение» որդանի շուրջը խմբավորված լիբերալների ստորաքարչությունը ցարիզմի առաջ, Պոտրեսովի—Մարտովի բանաձևը լիբերալների առաջ դնում էր համաձայնության դալու մի շարք պայմաններ:

Պոտրեսովի—Մարտովի բանաձևն ուղորտունիստական, քաղաքականապես ճապաղ բանաձև էր: Այս բանաձևը, մատնանշում էր Լենինը, «չի սանաճում ուսական լիբերալիզմի դասակարգային բովանդակությունը, այն չի մատնանշում լիբերալիզմի արտահայտող քաղաքական վարոչ հոսանքներ, այն չի պարզաբանում պրոլետարիատին պրոպագանդայի և ազիտացիայի նրա հիմնական խնդիրներն այդ վորոչ հոսանքների վերաբերմամբ, այն չի լիտթում է (չնորհիվ իր ճապաղության) այնպիսի տարբեր բաներ, ինչպես ուսանողական շարժումը և «Освобождение»-ն»³: Լիբերալներին ցույց տալիք վերաբերմունքի մասին յեղած վեճը II համադումարում մի վեճ էր պրոլետարիատի դեկավար դերի մասին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ, այդ վեճը կռահեց հետագա պայքարն ընդդեմ մենշևիկներին ու եսերներին, վորոնք 1905—1907 թ. թ. ժամանակաշրջանում դնում էյին բուրժուազիայի պոչից և 1917 թ.վին հանդես յեկան վերջնակա-

1 ՀամԿ(բ)՝ բանաձևերում, մ. I, էջ 20:

2 Լենին, ՌՄԴԻԿ II համադումարը, Յերկ., 4. VI, էջ 10:

3 Լենին, Մի քայլ առաջ յերկու քայլ հետ, Յերկ., հայ. հրատ., 4. VI, էջ 12:

նապես դաշինք կնքած բուրժուազիայի հետ, ընդդեմ պրոլետարիատի: Այս պատմական հեռանկարը միայն նկատի ունենալով, կարելի չե հասկանալ լիբերալներին ցույց տալիք վերաբերմունքի հարցի մասին լենինյանների վեճի խորը սկզբունքայնությունն ու կրքոտությունը:

Ինչպես հայտնի չե, առանձնապես սուր վեճեր ծավալվեցին կուսակցության կանոնադրության շուրջը: Այն ժամանակ դեռևս վոչ ամենքի համար եր պարզ, վոր այդ վեճերը բանվորական կուսակցություն ստեղծելու և առաջիկա հեղափոխության մեջ նրա դերը զնահատելու միանգամայն տարբեր ուղղությունները արտահայտությունն էլին: Այդ բանն առանձնապես չեյին հասկանում Ս Ինտերնացիոնալի արևմտա-յեվրոպական կուսակցությունների լիգերները, վորոնց առջև մենչևիկները Լենինին նկարագրում էյին վորպես մի աղանդավորի, վորն իրը թե ավելորդ խստությունն է մտցնում այնտեղ, վորտեղ կարելի չե, նրանց կարծիքով, «միջին դիժ» գտնել: Լենինը կրքոտ կերպով պաշտպանում եր «ի՞նչ անել» դրքում դարգացրած կազմակերպական հայացքները, վորովհետև խոսքն այն մասին եր, թե կստեղծվի արդյոք մի կուսակցություն՝ վորպես պրոլետարիատի առաջավոր, կազմակերպված հեղափոխական ջոկատ: Մենչևիկները դիտավորյալ կերպով շփոթում էյին «կուսակցություն» և «դասակարգ» յերկու հասկացողությունները, դիտավորյալ կերպով սլաղում, ջնջում էյին սահմանը կազմակերպության անդամի և համակրող գործադուլավորի, պրոֆեսորի, դիմնադիտտի միջև: Նրանք ձգտում էյին ստեղծել մի ընդարձակ մանր-բուրժուական «բանվորական կուսակցություն», վորտեղ առաջավոր, հեղափոխական բանվորները ինդիվիյալն դեռևս վոչ-բավականաչափ հասունացած բանվորների և ոպորտունիստորեն տրամադրված, քաղաքականապես ճապող տարբերի մասսայի մեջ:

Կուսակցության կանոնադրության առաջին պարագրաֆի՝ Լենինի և Մարտովի ձևակերպումներում պրոլետարական ցենտրալիզմն ու կարգապահությունը բաղխվեցին բուրժուական անարխիստական ինդիվիդուալիզմի հետ:

Ինուլթադրելով կուսակցության շինարարության լենինյան հիմունքները, ընկեր Ստալինը պրոլետարական դիկտատուրայի ժամանակաշրջանում ընդդեմ կուսակցության մեջ անդամությունը վորոշելու համար Լենինի մղած այդ պայքարի հսկայական սկզբունքային նշանակությունը:

«Այն միտքը, թե կուսակցությունը կազմակերպված ամբողջությունն է, ամբաստնված է մեր կուսակցության կանոնադրության առաջին կետի Լենինի հայտնի ձևակերպման մեջ, վորտեղ կուսակցությունը դիտվում է վորպես կազմակերպությունները ցումար, իսկ կուսակցության անդամները՝ վորպես կուսակցության կազմակերպություններից մեկնումեկի անդամներ: Մենչևիկները, վորոնք առարկում էյին այս ձևակերպման դեմ դեռևս 1903 թվին, դրա վորխարեն առաջարկում էյին կուսակցության մեջ ինքնահաշվեգրվելու (созачисление) «սիստեմ», կուսակցության անդամի «կոչումը» այս կամ այն կերպ կուսակցությանն ոժանդակող, բայց կուսակցական կազմակերպություններից և վոչ մեկի մեջ չմտած ու մտնել չցանկացող ամեն մի «պրոֆեսորի» ու «դիմնադիտտի», ամեն մի «համակրողի» ու «գործադուլավորի» վրա տարածելու «սիստեմ»: Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այս որիդինալ «սիստեմը», յեթե այն ամբանար մեր կուսակցության մեջ, անխուսափելիորեն կունենար այն հետևանքը, վոր կուսակցությունը կզերյցվեր պրոֆեսորներով ու գիմնադիտտներով և կայլասերվեր ու կզանար ճապող, չձևավորված, կազմալուծված մի «դոյացում», վորը կորչում է «համակրողների» ծովում, ջնջում է սահմանը կուսակցության ու դասակարգի միջև և տապալում է կուսակցության խնդիրը՝ անկազմակերպ մասսաներին միջև առաջավոր ջոկատի մակարդակը բարձրացնելու վերաբերմամբ: Ինչ ասել կուզի, վոր այդպիսի ոպորտունիստական «սիստեմի» պարագայում մեր կուսակցությունն անկարող կլիներ բանվոր դասակարգի կազմակերպող միջուկի դերը կատարելու մեր հեղափոխության ընթացքի մեջ»¹:

II համագումարում «մեղմ» իսկրայականների, «ճահճի» և հակաիսկրայականների ձայներով ընդունվեց Մարտովի ձևակերպումը. կարելի չե համակրել, ոժանդակել, չմտնել կուսակցության մեջ և կուսակցության անդամ համարվել: Միայն III համագումարը 1905 թ. դարնանն ընդունեց կուսակցության կանոնադրության առաջին պարագրաֆի լենինյան ձևակերպումը: IV Միավորիչ համագումարը 1906 թ. հաստատեց այդ վորոշումը:

Պատմական փորձը ցույց տվեց, թե ինչ հսկայական նշանակություն ունեք կուսակցության անդամության բուլչևիկյան ըմբռնումը: Այս ըմբռնման հիման վրա տասնյակ տարիներում

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, հայ. հրատ., էջ 91:

կազմավորվում եր բուլճերիկներէ այն նշանավոր կազմակերպու-
թյունը, վորը կատարեց ցարիզմը տապալելու, բուրժուազիայի
իշխանութիւնը տապալելու և աշխարհում առաջին սոցիալիս-
տական պետութիւնն ստեղծելու հսկայական պատմական խըն-
դիրները: Այս հիման վրա մշակվում եր բուլճերիկյան կարգապա-
հութիւնը, վորն ոգնեց քանակով վոչ մեծ կազմակերպութիւնը
փոխարկելու մի հզոր հեղափոխական, կամքի միասնութեամբ
տողորված ուժի:

II համազումարի կարևորագույն գործն եր հատկապես ու-
պորտունիստներէց սահմանազատվելը: «Մեծամասնութեան և
փոքրամասնութեան բաժանվելը,—գրում եր Լենինը պառակտման
առթիւ,—ուղղակի և անխուսափելի շարունակութիւնն ե սո-
ցիալ-դեմոկրատիայի այն բաժանմանը հեղափոխականի և սո-
տունիստականի, Լեոն և Ժիրոնդայի, վորը միայն յերեկ չե
յերեան յեկել և վոչ միայն ուսական բանվորական կուսակցու-
թեան մեջ և վորը, հայանորեն, վաղը չի չքանա»¹:

II համազումարում Մարտովն առաջարկեց կուսակցութեան
ԿԿ-ի անդամ ընտրել 7 հոդի՝ «մեղմ» իսկրայականներից և «ճահ-
ճից» Լենինը պնդում եր ԿԿ-ի կազմի մեջ ընտրել մի ամուր
յեռյակ «ամուր» իսկրայականներից, վորոնք կոպտացիայի է-
րավունք ունենային: Տրոցկին առաջարկեց, ԿԿ «Искра»-յի էրմ-
բազրութեան կազմում հաստատել հին վեցյակը: Լենինը՝ պայ-
քարելով ընտանեկանութեան դեմ, առաջարկեց աշխատունակ մի
յեռյակ—Պլեխանով, Լենին և Մարտով: Լենինի առաջարկն հա-
մազումարի կողմից ընդունվեց այն պատճառով, վոր այդ ժա-
մանակ համազումարից հեռացան «Рабочее Дело»-յի 2 պատգա-
մավորներ, վորոնք դժգոհ էին այն բանից, վոր համազումարը
ցրեց ուսական սոցիալ-դեմոկրատիայի նրանց Արտասահմանյան
միութիւնը, հեռացան 5 բունդականներ, վորոնք համաձայն չե-
լին համազումարի վորոշմանը, վորը մերժեց Փեդերացիան և
Բունդին՝ վորպես հրեական պրոլետարիատի միակ ներկայացու-
ցիչը համարելու առաջարկը: Կուսակցութեան կենտրոնական
հիմնարկներ ընտրելիս համազումարում ուժերի հարաբերակցու-
թիւնն այնպիսին եր, վոր Լենինյանները մեծամասնութիւն ու-
նեյին: Այստեղից՝ «բուլճերիկներ» և «մենչերիկներ» կոչումը:

Այսպիսով, ձևականորեն պառակտումը տեղի ունեցավ կու-

1 Լենին, Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ, Յերկ., հայ. հրատ., հ. VI,
էջ 373:

սակցութեան կենտրոնական հիմնարկների կազմի հարցի առթիւ,
իսկ փաստորեն պառակտումը տեղի ունեցավ այն հարցի առթիւ,
թե մենք արդոք կունենանք իսկական պրոլետարական կուսակ-
ցութիւն, վորն ընդունակ լինի գլխավորելու բանվոր դասակար-
դի պայքարը և ապահովելու նրա հեղեմոնիան հեղափոխական
շարժման մեջ, թե՞ այդպիսի կուսակցութիւն չի լինի, և այն
ժամանակ Ռուսաստանի բանվոր դասակարգը չի կարողանա կա-
տարել իր համաշխարհային-պատմական խնդիրները:

II համազումարում տեղի ունեցած պառակտման առթիւ II
Ինտերնացիոնալի ոպորտունիստները մեծ աղմուկ բարձրացրին:
Հարձակումների կենտրոնը Լենինն եր: Այն ժամանակ, յերբ ան-
կայուն, վոչ-կուսակցական տարրերը նվնվում էին պառակտման
առթիւ, մեղադրելով այդ պառակտման մեջ «անհաշտ» Լենինին
և «քարի պես ամուր» բուլճերիկներին, Լենինը գրում եր. «Ի՞նչ
հիանալի բան ե մեր համազումարը... Բա՛ց, ազա՛տ պայքար:
Կարծիքներն արտահայտված են: Յերանդներն ուրվադժվել են:
Խմբերը նշվել են: Ձեռքերը բարձրացված են: Վճիռն ընդունված
ե: Հանդրվանն անցել ենք: Հառա՛ջ»¹:

Ի՞նչ թարմ են հնչում այս սողերը 35 տարի հետո, կարծես
դրանք յերեկ են գրվել: Ի՞նչ վստահութիւն ե զգացվում դեպի
հաղթանակն այս խիստ պարզ արտահայտված Ֆրազներում: Այն,
վոր Լենինը բարձրացրեց պայքարի դրոշը, հեղափոխական մարք-
սիզմի դրոշը ՌՍԴԻԿ առաջին իսկ համեմատաբար մաղմամարդ
համազումարում, վորտեղ ընդունվում էին կուսակցութեան
ծրագիրն ու կանոնադրութիւնը, չեր կարող չտաղնապեցնել
«բոնդերին» II Ինտերնացիոնալից: Սակայն միանգամայն պարզ
ե, վոր առանց ոպորտունիստներից խզվելու, առանց խտորին-
սահմանադատվելու, առանց նրանցից պառակտվելու չեր կարող
ծագել բուլճերիկների այն նշանավոր կազմակերպութիւնը, վորն
այժմ կանգնած ե աշխարհում առաջին հաղթանակած սոցիալիզ-
մի յերկրի գլուխ, չեր լինի Լենինի—Ստալինի կուսակցութիւնը,
Կոմունիստական Ինտերնացիոնալի առաջավոր ջոկատը: Ռպոր-
տունիստների հետ այս խզման կարևորութիւնը հիշեցրեց ընկեր
Ստալինը կուսակցութեան XV համազումարում արտասանած
յեզրափակման խոսքի մեջ:

«Վերցնենք 1903 թ., մեր կուսակցութեան յերկրորդ համա-

1 Լենին, Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ, Յերկ., հ. VI, հայ. հրատ.,
էջ 377:

գումարի ժամանակաշրջանը: Այդ այն շրջանն էր, յերբ կուսակցութիւնը շրջադարձ էր կատարում լիբերալների հետ համաձայնութիւն կնքելուց դեպի մահացու կռիւմ լիբերալ բուրժուազիայի դեմ, ցարիզմի դեմ ուղղված պայքարի նախապատրաստումից դեպի բացահայտ պայքար նրա դեմ՝ ցարիզմի և Ֆեոդալիզմի լիակատար ջախջախման համար: Կուսակցութեան գլուխ այն ժամանակ կանգնած էր վեցյակը՝ Պլեխանով, Զասուլիչ, Մարտով, Լենին, Ակսելրոդ, Պոտրեսով: Երջադարձը ճակատագրական դուրս յեկավ այդ վեցյակի հինգ անդամի համար: Նրանք սաշակից դուրս ընկան: Լենինը մնաց միայնակ: (Մափահարութիւններ): Ստացվեց այնպես, վոր կուսակցութեան հին լիզերները, կուսակցութեան հիմնադիրները (Պլեխանով, Զասուլիչ, Ակսելրոդ) պլյուս յերկու յերիտասարդ (Մարտով, Պոտրեսով) դեմ դուրս յեկան մեկին, նույնպես յերիտասարդ, ընկ. Լենինին: Յեթե դուք իմանայիք, թե այն ժամանակ վորքան վայնասուններ, վորք ու վորոնոցներ կային այն մասին, թե կուսակցութիւնը կկործանվի, կուսակցութիւնը չի դիմանա, վոր առանց հին պարագլուխների վոչինչ դուրս չի դա: Սակայն վայնասուններն ու գանդատները վերացան: Իսկ փաստերը մնացին: Իսկ փաստերն այնպես էլին, վոր հենց հնգյակի հեռանալու շնորհիւ կուսակցութեանը հաջողվեց ճանապարհ դուրս գալ: Այժմ յուրաքանչյուր բոլշևիկի համար պարզ է, վոր առանց Լենինի վճռական պայքարի ընդդեմ հնգյակի, առանց հնգյակին հետ մղելու մեր կուսակցութիւնը չէր կարողանա համախմբվել վորպես բոլշևիկների կուսակցութիւն, վորն ընդունակ է պրոլետարներին տանելու դեպի հեղափոխութիւն՝ ընդդեմ բուրժուազիայի»¹:

ՌՍԳԲԿ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱԾ ՊԱՌԱՎՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

II համագումարում Լենինի շուրջը կազմավորվեց նոր տիպի կուսակցութիւն: Մարտական հեղափոխական կուսակցութիւն ստեղծելու համար, «վորը պետք է բավականաչափ համարձակ լինի, վորպեսզի պրոլետարներին առաջնորդի դեպի կռիւմ հանուն

1 Համհ(բ)Կ XV համագումարի սղադր. հաշվ., էջ 366, Կուսհրատ, 1935 թ.:

իշխանութեան, բավականաչափ փորձված լինի, վորպեսզի հեղափոխական իրազրութեան բարձր պայմաններից գլուխ հանի, և բավականաչափ ճկուն լինի, վորպեսզի խուսափի իր նպատակի ճանապարհին յեղած բոլոր և ամեն տեսակ ստորջրյա քարերից»², — աշխատում էլին Լենինն ու Ստալինը:

Յերկրորդ համագումարը տեղի յեր ունենում Ռուսաստանում հետզհետե աճող հեղափոխական շարժման պայմաններում, յերբ բանվոր դասակարգը քանի դնում, այնքան ավելի գործունյա և ազդեցիկ ուժ էր դառնում վերահաս հեղափոխութեան մեջ: II համագումարը տեղի յեր ունենում այն ժամանակ, յերբ քաղաքական պայքարի ասպարեզ էր դուրս յեկել հեղափոխական գյուղացիութիւնը, յերբ քաղաքային և գյուղական մանր բուրժուազիայի մեջ աճում էր դեֆոհոութիւնը ինքնակալութեան քաղաքականութիւնից, յերբ նշվում էր ուսական բուրժուազիայի հակահեղափոխական դերը, յերբ արդեն բավականաչափ պարզորոշ պայքար էր տեղի ունենում պրոլետարիատի վրա ազդեցութիւն ձեռք բերելու համար հեղափոխական մարքսիստների, մի կողմից, և լիբերալ բուրժուազիայի միջև, մյուս կողմից, յերբ մենչևիկները քարշ էլին դալիս լիբերալ բուրժուազիայի պոչից: Լենինն իր «Սոցիալիզմ և պատերազմ» բրոշյուրում 1915 թ. գրում էր դասակարգային և քաղաքական սահմանադատման մասին առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան նախորդակին. «Բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան եւ պոխան ծնեց հոսանքների նոր պայքար սոցիալ-դեմոկրատիայի միջև, վորը նախորդի ուղղակի շարունակութիւնն է: «Եկոնոմիզմը» «մենչևիզմի» ձևափոխվեց: Հին «Искра»-ի հեղափոխական տակտիկան պաշտպանելը «բոլշևիզմ» ստեղծեց:

1905—1907 փոթորկալից տարիներին մենչևիզմը ոպորտունիստական հոսանք էր, վորին պաշտպանում էլին լիբերալ բուրժուաները և վորը ծնեց լիբերալ-բուրժուական տենդենցներ բանվորական շարժման մեջ: Բանվոր դասակարգի պայքարը լիբերալիզմին հարմարեցնելը, այս էր նրա էյուլթիւնը»²:

Յերկրորդ համագումարը սկիզբ դրեց բոլշևիկյան կուսակցութեան, նոր տիպի կուսակցութեան գոյութեանը: «Առաջ, — գրում էր Լենինը, — մեր կուսակցութիւնը ձևականորեն կազմակերպված ամբողջութիւն չէր, այլ սոսկ մասնավոր խմբերի

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 87—88:

2 Լենին, Սոցիալիզմ և պատերազմ, Յերկ., Կ. XVIII, էջ 219:

գումար, ուստի և այլ հարաբերություններ այդ խմբերի միջև, բացի դադարաբաշխան ներդրությունից, չեն ել կարող լինել: Այժմ մենք դարձանք կազմակերպված կուսակցություն»¹: Այդ մոմենտից սկսած բոլշևիկների կուսակցությունը հանդես ե գալիս վորպես ինքնուրույն ուժ, չնայած ձևականորեն դեռ մի շարք տարիների ընթացքում մնում է ՌՄԴԲԿ ընդհանուր դրոշի ներքո: «Բոլշևիկները, վորպես քաղաքական մտքի հոսանք և վորպես քաղաքական կուսակցություն, դոյություն ունի 1903 թվականից»²: Կուսակցության կյանքում հետագայում մոմենտներ են յեղել, յերբ նա փորձեր ե արել միասնական ճակատ սահմանել մենչևիկների հետևից զնացող բանվորների հետ, և հանուն այդ բանի համաձայնել ե մենչևիկյան կազմակերպությունների հետ նույնիսկ ժամանակավոր միավորումներ կազմել, ինչպես այդ յեղել ե, որինակ, ՌՄԴԲԿ IV Միավորիչ համագումարում 1906 թ.: Սակայն II համագումարից սկսած, 1903 թվից սկսած, մարքսիզմի հեղափոխական թևը, լինինյանների թևը, ամբողջ միջազգային բանվորական շարժման մեջ ինքնուրույն կուսակցություն, թեև վերջնականապես բոլշևիկներն այդ անշատումը ձևակերպեցին միայն 1912 թ., Պրագայի VII համակուսակցական կոնֆերենցիայում: Բոլշևիկները սլաշտպանում են իրենց վորոշակի կազմակերպական գիծը: Բոլշևիկները մշակում են իրենց բաղձիկյան տակտիկան, ձևակերպում են այն նախ կուսակցության II համագումարում, իսկ ապա տվելի ճշտորոշում են այն կուսակցության III համագումարում՝ 1905 թվին:

Յերկրորդ համագումարը կուսակցությանը տվեց ծրագիր, կանոնադրություն և վորոշումներ պրոլետարիատի հեղափոխական պայքարի ամենից ավելի կարևոր հարցերի շուրջը: II համագումարում 1903 թ. տեղի յե ունենում կուսակցության գաղափարական ամբողջ բազաթի առաջին մեծ ստուգատեսը, անդի յե ունենում հիմնական ուժերի դասավորումը ՌՄԴԲԿ մեջ. մի կողմից՝ բոլշևիկները, մյուս կողմից՝ մենչևիկները: Տրոցկին II համագումարում տիպիկ մենչևիկ եր, պրոլետարական կենտրոնացած կուսակցության և հեղափոխական քաղաքականության թըշնամի:

¹ Լեճին, Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ, Յերկ., հ. VI, հայ. հրատ., էջ 400:

² Լեճին, «Չխուսթյան» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ, հայ. հրատ., էջ 9:

Այն ժամանակ շատերին թվում եր, թե մինչև համագումարը և հենց համագումարում յերևան յեկած տարածայնությունները եյական չեն: Մավալվող հեղափոխական դեպքերի դեմ-հանդիման շատերին թվում եր, թե կարելի յե հեշտությամբ հաղթահարել այդ տարածայնությունները, վոր նրանք խորը չեն: Սակայն ներկուսակցական կյանքի հետագա զարգացումը ցույց տվեց, վոր դեռ «Искра»-յի խմբադրություն մեջ սկսված տարածայնությունները խորացան և իրենց արտացոլումը գտան կուսակցության ներքում տեղի ունեցած հետագա սուր պայքարում և II համագումարում հանգեցին յերկու կուսակցությունների գոյացման:

Պատակտումը II համագումարում խոշոր միջազգային նշանակություն ուներ: Ի սլաշտպանություն մենչևիկների ոպորտունիստական դիրքի հանդես յեկան II Ինտերնացիոնալի լիզերները: Ի սլաշտպանություն կուսակցության և կուսակցականության Լենինը, բոլշևիկները պայքար եյին մղում թե՛ ուսուկան և թե՛ միջազգային ոպորտունիզմի դեմ: II համագումարում հիմնական ծրագրային, տակտիկական ու կազմակերպական հարցերի, ինչպես, որինակ, պրոլետարիատի հեղեմոնիայի, պրոլետարիատի դիկտատուրայի, հեղափոխության մեջ դյուզացիություն ունեցած գերի, լրերբալ բուրժուազիային ցույց տալիք վերարեմունքի, կուսակցության կանոնադրության առաջին պարագրաֆի շուրջը տեղի ունեցող պայքարը բացատրում ե համագումարից հետո ծավալվող պայքարը լինինիզմի հետևողական կողմնակիցների և ոպորտունիստների միջև, ոպորտունիստներ, վորոնք մենչևիկներն աղավաղում են մարքսիզմը: Այս պայքարը համագումարից հետո ուժեղացավ և տարածայնությունները բոլշևիկների ու մենչևիկների միջև սրվեցին և ել ավելի վորոշակի բնույթ ստացան:

Յերկրորդ համագումարը տվեց սոցիալ-դեմոկրատական շարժման զարգացման առաջին այն յերեք շըջանների հանրագումարները, վորոնց մասին գրում եր Լենինը «Ի՞նչ անել» գրքում: Ահա թե ինչու կուսակցության II համագումարի մանրամասն ուսումնասիրությունն առանձնապես անհրաժեշտ ե յուրաքանչյուրի համար, ով կամենում ե հիմնավորապես ծանոթանալ բոլշևիկների կուսակցության սլամուսթյանը: Կուսակցության II համագումարի գլխավոր խնդիրն ե յեղել «իսկական կուսակցություն ստեղծելն այն սկզբունքային ու կազմակերպական հիմունքներով, վոր

մագուճարից հետո պայքարում էր կուսակցութեան հեղափոխական թեւը (բոլշեխիները) ոպորտունիստների դեմ, բանվոր դասակարգի մարտական կուսակցութեան թշնամիների (մենչեխիները) դեմ:

Ոգոստոսի 12—14-ին ժընելում Լենինի ղեկավարութեամբ տեղի ունեցավ 22 բոլշեխիների խորհրդակցութեանը, վորը կուսակցութեանը կոչ էր անում նախապատրաստելու կուսակցութեան III համագումարի ընտրութեանը: Խորհրդակցութեանը նշեց ընկերներ՝ Մեծամասնութեան կոմիտեների բյուրոյի (ՄԿԲ) համար՝ հետեյալ կազմով. Լենին, Լիտվինով, Զեմլյաչկա, Գուսեւ և Լյադով, վորոնք պետք է անմիջականորեն նախապատրաստեյին կուսակցութեան նոր, III համագումարը:

Հոկտեմբեր—նոյեմբերին Ռուսաստանում կայացավ յերեք կոնֆերենցիա. Կովկասյան, Հարավային և Հյուսիսային, վորոնք արտահայտեցին հոգուտ III համագումարի անհապաղ գումարման և հաստատեցին մեծամասնութեան կոմիտեների բյուրոն:

Մենչեխիներին մերկացնելու և կուսակցական կազմակերպութեանը Լենինի շուրջը համախմբելու գործում հսկայական աշխատանք տարավ Անդրկովկասում ընկեր Ստալինը, վորի ղեկավարութեամբ ցրվեցին Բագվի և Թիֆլիսի կոմիտեները, վորոնք կազմված էյին մենչեխիներից, և ստեղծվեցին բոլշեխիյան կոմիտեներ: Անդրկովկասում կանոնավոր կերպով լույս էր տեսնում «Борьба пролетариата» բոլշեխիյան լրագիրը: Ընկեր Ստալինի աշխատանքն Անդրկովկասում—մի նմուշ է հետևողական և սկզբունքային պայքարի ընդդեմ ոպորտունիստների, հանուն մարտական, բոլշեխիյան կուսակցութեան ստեղծման:

Հանուն հին «Искра»-յի հեղափոխական տրադիցիաները շարունակելու, ընդդեմ մենչեխիյան նոր «Искра»-յի հանդես յեկավ Լենինի կողմից 1904 թ. դեկտեմբերին կազմակերպված «Вперед» լրագիրը, վորի առաջին համարը լույս տեսավ 1905 թ. հունվարի 4-ին:

Լենինի քաղաքական գործունեյութեանը, նրա պայքարն ընդդեմ Ռուսաստանի հեղափոխական շարժման մեջ յեղած զանազան հակապրոլետարական հոսանքների սկզբից ևեթ խորը միջազգային նշանակութեան ունեյին, վորովհետև այդ պայքար էր վոչ միայն ռուսական, այլև միջազգային բոլոր գույների ու յերանդների ոպորտունիզմի դեմ: Այսպես, պայքարելով լեզալ մարքայատների ու եկոնոմիստների դեմ, Լենինն այդ նույն ժամանակ

պայքարում էր դերմանական բերնշտայնականները—ոեմիլիոնիստների դեմ, ուրիշ յերկրների ոպորտունիստների դեմ: Ճիշտ է, Բերնշտայնին մենակ Լենինը չէր, վոր քննադատում էր: Նրան ստիպված էր «քննադատել» նաև Կաուցկին: Սակայն Կաուցկին հանդես յեկավ Բերնշտայնի ոեմիլիոնիզմի դեմ չափազանց ղեմկամութեամբ և այն էլ այնպիսի կարևորագույն հարցերի առթիւ, ինչպես հեղափոխութեան թեորիան, պրոլետարիատի դիկտատուրայի հարցը: Կաուցկին վերջնականապես չեղվեց հեղափոխական դիրքերից դեպի Բերնշտայնի ոեմիլիոնիստական հայացքները: Գերմանական ճախ սոցիալ-դեմոկրատները, ինչպես մոզա Լուքսեմբուրգը, հարկ յեղած վճռակիտութեանը չցուցաբերեցին՝ կուսակցութեանը ոպորտունիստներից մաքրելու համար մղվող պայքարում: Ընդհանրապէս, Լենինը շատ սուբ կերպով հարձակվեց ինչպես ընդդեմ ռուսական, այնպես էլ ընդդեմ միջազգային ոպորտունիստների:

«Նորագույն սոցիալիզմի պատմութեան մեջ,—գրում էր Լենինը 1902 թ. «Ինչ անել»-ում,—դրեթէ միակ և յուրատեսակ չափազանց միութարական յերևույթն է այս, վոր սոցիալիզմի ներսում տեղի ունեցող ազգային ուղղութեանները դժտութեանը առաջին անգամ աղբայնից փոխակերպվեց ինտերնացիոնալականի: Առաջներում լաստալականների և ալլեմալականների, դեպիստների ու սոսիալիստների, ֆարիականների և սոցիալ-դեմոկրատների, նարոդոլոյականների և սոցիալ-դեմոկրատների վեճերը մնում էյին գուտ ազգային վեճեր, արտացոլում գուտ ազգային առանձնահատկութեաններ, տեղի էյին ունենում, այս ազգային առանձնահատկութեաններ, տեղի էյին ունենում, այսպես ասած, տարբեր մակարդակների վրա: Ներկայումս (այժմ պես ասած, տարբեր մակարդակների վրա) անգլիական ֆարիականները, ֆրանսական միլիտարիստները, դերմանական բերնշտայնականները, ռուսական քննադատները,—դրանք ամենքը մի քնտանիք են, նրանք ամենքը գոյում են միմյանց, սովորում միմյանցից և միահամուռ կերպով դիմում են «դոզմատիկ» մարքսիզմի դեմ»¹:

Բոլշեխիյան կազմակերպութեան ստղծմամբ Լենինի պայքարը II ինտերնացիոնալում յեղած ոպորտունիստների դեմ ընդունում է էլ ավելի սուբ բնույթ: Արդեն «Ինչ անել» գրքում Լենինը միանգամայն պարզ սահմանում է տալիս, թե անհրաճելու

1 Լենին, Ինչ անել, էջ 9:

և Մ Ինտերնացիոնալում ընտրել ինքնուրույն հեղափոխական մարքսիստական գիծ և պառակտվել ոպորտունիստներից միջադաշին մասշտաբով: Հետագայում Լենինը գրում էր, վոր «Մ Ինտերնացիոնալի դարձաշրջանի սոցիալիստական կուսակցությունների արխարն այն կուսակցությունն էր, վորն իր շարքերում ոպորտունիզմ էր հանդուրժում»¹:

Ոպորտունիստներից խզվելու, պառակտվելու՝ Լենինի այս գիծը առաջացնում է պայքար նրա դեմ Մ Ինտերնացիոնալի բուլտր ոպորտունիստների կողմից: Մ Ինտերնացիոնալի ղեկավարությունը Կառուցվու գլխավորությամբ ՌՄԴԲԿ պառակտման հարցում միահամուռ կերպով կանգնեց մենչևիկների կողմը: Բուլչեվիկները միջադաշին ասպարեղում մնացին մենակ՝ շրջապատված ոպորտունիստների թշնամությամբ ու ատելությամբ: Մ Ինտերնացիոնալի կուսակցությունների լրագրերն ու ժուռնալները տպագրում էյին հողվածներ, վորոնք մենչևիկյան լուսարանություն էյին տալիս ՌՄԴԲԿ մեջ յեղած գործերի դրությանը: Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի «Neue Zeit» թերթիական որդանը, վորը խմբագրում էր Կառուցվին, հրատարակեց գետեղել Լենինի և ուրիշ բուլչևիկների հողվածները, վորոնք պարզաբանում էյին բուլչևիկների և մենչևիկների միջև յեղած տարաձայնությունների եյությունը և հիմնավորում էյին հեղափոխական մարքսիզմի տեսակետը: Կառուցվին ուղղակի դուրս յեկավ բուլչեվիկների դեմ: Պառակտումը ՌՄԴԲԿ մեջ նշանակում է ոպորտունիստական և հեղափոխական ուղղությունների վճռական սահմանազատման շարունակություն բանվորական շարժման մեջ, —բուլչևիզմի և մենչևիզմի միջև: Այդ պառակտումը նշանակում էր յերկու տարբեր իդեոլոգիաների և յերկու քաղաքականուրքյունների ընդհարում —բանվոր դասակարգի և մանր բուրժուազիայի, վորը հանդես էր գալիս վորպես բուրժուազիայի ազենտուրա: Ռենեզատ Կառուցվին, իՍՀՄ ամենավոխերիմ թըշնամին, պառակտումն այն ժամանակ պատկերում էր լոկ վորպես յերկրորդական կարգի տարամիտում կազմակերպական հարցի առթիվ: «Հասարակական կարծիք» Մ Ինտերնացիոնալում ստեղծում էյին նրան մոտիկ մենչևիկները՝ Մարտովը, Պլեխանովը, Տրոցկին, Ակսելրոզը: Այդ պատճառով էլ Կառուցվին կրկնում էր մենչևիկյան-որոցկիստական զրպարտանքն այն մասին,

վոր ՌՄԴԲԿ մեջ պառակտման պատճառն իր թե անձնական դրժտություններն են, բուլչևիկների, առաջին հերթին Լենինի աղանդավորական անհաշտությունը: Կառուցվին արտահայտեց հոգուտ կանոնադրության առաջին կետի Մարտովի ձևակերպման և բուլչուքեց, վոր Մ համագումարը Ակսելրոզին, Չասուլիչին և Ստրովերին «Искра»-յի խմբագրության կազմի մեջ չի մտցրել:

Կառուցվու հետեից բուլչևիկների դեմ դուրս յեկան նաև գերմանական ձախ սոցիալ-դեմոկրատները՝ Պարվուսը, Ռոզա Լուքսեմբուրգը և ուրիշները: Ռոզա Լուքսեմբուրգը «Neue Zeit»-ում և մենչևիկյան «Искра»-յում ընդարձակ հողված գետեղեց, վորի մեջ մենչևիկյան կազմակերպական սկզբունքներին ծավալուն հիմնավորում տվեց, վերցնելով դրանք իր պաշտպանության տակ: Լիովին համաձայն Տրոցկուն և Ակսելրոզին՝ նա հարձակվում էր բուլչևիկների վրա, մեղադրելով նրանց «գերցենտրալիզմի» մեջ, այն բանի մեջ, վոր իր նրանք փորձում են կուսակցությունը կառուցել վո՛չ թե պրոլետարական մեթոդներով, այլ յակոբինների (Ֆրանսական բուրժուական հեղափոխության ժամանակվա մանր-բուրժուական հեղափոխականների) և Բլանկիի հետևորդ զավադիր-հեղափոխականների մեթոդներով:

1904 թ. սեպտեմբերին Լենինը հատուկ հողված գրեց—«Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ», վորը նվիրված էր Ռոզա Լուքսեմբուրգի կողմից դեպի ուսական սոցիալ-դեմոկրատիայի պառակտումն ունեցած վերաբերմունքի քննադատությանը և Ռոզա Լուքսեմբուրգի կողմից մենչևիկներին պաշտպանելուն: Լենինը մի հողված գրեց «Neue Zeit»-ի համար: Բայց Կառուցվին, վորը պաշտպանում էր մենչևիկներին, հրատարակեց այդ հողվածը տպագրելուց: Այդ հողվածն առաջին անգամ տպագրվեց միայն XV «Լենինյան ժողովածվում»:

Լենինն ընդգծում է, վոր ՌՄԴԲԿ մեջ յեղած դրությունը գնահատելիս «Ռ. Լուքսեմբուրգի տեսադաշտից ամբողջովին դուրս է ընկել մեր կուսակցության տարբեր ուղղությունների փաստական անալիզը»¹: Լենինը մանրամասնորեն կանգ է առնում հեղափոխական մարքսիզմի յեռամյա պայքարի վրա «ընդդեմ կուսակցության ոպորտունիստական թևի»²: Լենինն ընդգծում է, վոր Մ համագումարում կուսակցության պառակտումը

1 Լենին, Իսկ հետո՞ ինչ, Յերկ., 4. XVIII, էջ 86:

1 Լենին, Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ, Յերկ., 4. XXX, էջ 90—91:
2 Նույն տեղում, էջ 93:

«Հանդիսանում է լսել մեր կուսակցութեան՝ պրոլետարական-հեղա-
փոխական և ինտելիգենտական-ուսուրուներստական թեւերի բա-
ժանվելու հին վարիանտը: Դա փաստ է, վորը չի կարելի չըը-
ջանցել վոչ մի բացատրութեամբ, վոչ մի ծաղրուծանակով»¹:
«Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» համանուն աշխատութեան
մեջ, վորը հրատարակվեց ուսերեն լեզվով, Լենինը մանրամաս-
նորեն վերլուծեց ուսական և դերմանական մենչևիկներին առա-
ջադրած մեղադրանքները, վորոնք բոլշևիկներին մեղադրում է-
լին սպառակաման մեջ, յակորինասկանութեան մեջ և այլն, ընդ-
դեմ ուսական մենչևիկներին դադարաբան ազգակցութեանը
միջազգային ուսուրուներգմի հետ:

«Բացարձակապես վոչինչ,—գրում էր Լենինը,—բացի ապր-
տուհիովից, չեն արտահայտում այդ «սոսկալի խոսքերը»—յա-
կարինականութեան և այլն: Այն յակորինը, վոր անխղճիորեն
կատրված է իր դասակարգային շահերը գիտակցող պրոլետարիա-
տի կազմակերպութեան հետ, դա հենց հեղափոխական սոցիալ-
դեմոկրատն է: Այն ժիրոնդիստը, վորը պրոֆետորներին, դեմոս-
պիսաններին կարոտն է քաշում, վախենում է պրոլետարիատի դիկ-
տատուրայից, հառաչում է դեմոկրատական պահանջներին բացար-
ձակ արժեքի մասին, դա հենց ուսուրուներստն է: Հենց միայն
ուսուրուներստները կարող են ներկայումս ել վտանգ տեսնել դա-
վադրական կազմակերպութեաններին մեջ, յերբ գրականութեան
մեջ հաղարավոր անդամներ հերքված է քաղաքական պայքարը
մինչև դավադրութեան աստիճան նեղացնելու միտքը, հերքված
և վատրված է վաղուց կյանքի կողմից, յերբ քաղաքական մաս-
նայական ազիտացիայի կարգինալ կարևորութեանը պարզված է
և ծամծամված սիրտ խառնելու չափ: Դավադրութեան, բլանկիզմի
հանդեպ յերևան բերվող յերկյուղի իրական հիմքը վոչ թե գործ-
նական շարժման յերևան յեկող այս կամ այն գիծն է (ինչպես
վաղուց և շուտ ջանում է ցույց տալ Բերնշտայնը և Լինկ.), այլ
բուրժուական այն ինտելիգենտի ժիրոնդիստական յերկշտու-
թեանը, վորի հոգեբանութեանն այնպես հաճախ դրսևորվում է
ժամանակակից սոցիալ-դեմոկրատներին մեջ: Չկա ավելի կոմի-
կական բան, քան նոր «Искра»-յի նոր խումբ ստեղծել այդ «ճիւղերը
(վոր իր ժամանակին հարյուրավոր անդամներ ասվել է)՝ վորպես
նախազգուշացում քառասնական և վաթսունական թվականներին

¹ Լենին, Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ, Յերկ., 4. XXX, էջ 94:

Ֆրանսական հեղափոխական-դավադիրներին տակտիկայից...»¹:

Հետագա պայքարի ամբողջ պատմութեանը ցույց տվեց, վոր
խկապես նոր իրադրութեան մեջ, հեղափոխական պայքարի
միանգամայն այլ պայմաններում բոլշևիկները ներկայացնում է-
լին պրոլետարական յակորինի տիպար, այսինքն՝ մի հեղափոխա-
կանի, վորը կատրված է պրոլետարիատի կազմակերպութեան
հետ, գիտակցում է իր դասակարգային շահերը, իսկ մենչևիկ-
ները ներկայացնում էլին ժիրոնդիստի տիպար՝ մանր-բուրժուա-
կան հեղափոխականի, վորը հեռու յե և խորթ պրոլետարիատին,
և վորը պաշտպանում է բուրժուազիայի շահերը:

Մենչևիկները վորձ արին ուղղակի, պաշտոնապես II Ինտեր-
նացիոնալին ստիպել իրենց տղտին արտահայտվելու: Նրանք դե-
մեցին Ավգուստ Բերեխին, վորն այն ժամանակ բանվորական
մասսաների և դերմանական սոցիալ-դեմոկրատիայի ժողովրդա-
մասսաների և դերմանական սոցիալ-դեմոկրատիայի ժողովրդա-
կանութեան վայելույ առաջնորդն էր, վոր նա կազմակերպի «միջ-
նորդ դատարան»: Բերեխը բոլշևիկներին և մենչևիկներին հաշ-
տեցնելու ցանկութեան դիմակի տակ մեղադրանքներ առաջադրեց
Լենինին: Նա առաջարկեց «միջնորդ դատարան» կազմակերպել
բոլշևիկներին ու մենչևիկներին միջև յեղած վեճերը լուծելու հա-
մար: Լենինը չէր կարող թույլ տալ, վոր բոլշևիկներին ու մեն-
չևիկներին միջև յեղած սկզբունքային տարաձայնութեանները,
սկզբունքային պայքարը միջնորդային ձևով քննութեան առնելին
II Ինտերնացիոնալում: Լենինը, բոլշևիկները խստորեն մերժեցին
այդ «միջնորդ դատարանը», մատնանշելով, վոր միայն ուսա-
կան սոցիալ-դեմոկրատներին կուսակցական համադրումարն է ի-
կան սոցիալ-դեմոկրատներին կուսակցական համադրումարն է ի-
կան սոցիալ-դեմոկրատներին: Թեև Պրեխանովը պահանջ
Ինտերնացիոնալի ուսուրուներստներին: Թեև Պրեխանովը պահանջ
հայտնեց, վոր ՌՄԴԻԿ միակ ներկայացուցիչը II Ինտերնացիոնա-
լում ինքը լինի, սակայն Լենինը հասավ այն բանին, վոր բոլ-
շևիկները ինքնուրույն ներկայացուցչութեան ձևով բերեն, և
1904 թ. Ամստերդամում տեղի ունեցած II Ինտերնացիոնալի
կոնդրեստում բոլշևիկյան կուսակցութեան ներկայացուցիչներն
եյլին յերկու բոլշևիկներ՝ Լյազովը և Կրասնիկովը: Այդ պատի-
բակութեանը հրատարակեց ու տարածեց Լենինի կողմից խմբա-
դրված մի հաշվետվութեան, վորի մեջ բոլշևիկյան դնահատա-

¹ Լենին, Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ, Յերկ., 4. VI, հայ. հրատ.
էջ 418—419:

կան եր տրվում ամբողջ անցյալ հեղափոխական աշխատանքին և ՌՄԴԲԿ II համագումարում տեղի ունեցած պառակտման ելույթյանը:

Սյուպիսով, արդեն 1904 թ. II Ինտերնացիոնալի միջազգային կոնգրեսում բուլղարիայի կուսակցութունը վոչ միայն փաստորեն, այլև ձևականորեն իրեն վորպես ինքնուրույն կուսակցութուն հակադրեց ռուսական և միջազգային ուղորտունիզմին:

Բուլղարիայի հետհամագումարյան ամբողջ պայքարը հանուն նոր տիպի կուսակցության ակնառու կերպով ցույց տվեց, վոր ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի պատակտումը II համագումարում նշանակում էր պառակտման դեմ միջազգային բանվորական շարժման մեջ յեղած ուղորտունիզմի հետ:

* * *

Լենինի ամբողջ պայքարը մինչև կուսակցության II համագումարը, բուն իսկ համագումարում և հետհամագումարյան ժամանակաշրջանում խորը սկզբունքայնության, հեղափոխական մարքսիզմից ամեն տեսակի թեքումների դեմ անհաշտ դադախարական պայքարի մի նմուշ է:

Ընկեր Ստալինը գրում էր. «Ինչո՞վ դերազանցութուն ձևեք բերեց այն ժամանակ կուսակցության բուլղարիայի մասը, ինչո՞վ նա նվաճեց կուսակցության մեծամասնության համակրությունը: Նրանով, վոր նա չէր կոծկում սկզբունքային տարաձայնությունները և պայքարում էր այդ տարաձայնությունները վերացնելու համար՝ մենչև ինքնին մեկուսացնելու ճանապարհով»¹:

Յերեսուն հինգ տարի յե անցել ՌՄԴԲԿ II համագումարից հետո: Յերեք հեղափոխություններում, իսկ այս պրոլետարական դիկտատուրայի 20 տարվա ժամանակաընթացքում ամենախոր, հանրակողմանի ստուգման յենթարկվեցին բուլղարիայի սկզբունքները: Լենինի—Ստալինի ուսմունքը կուսակցության մասին, վորպես բանվոր դասակարգի առաջավոր, կազմակերպված շուկատի, վորպես պրոլետարիատի դլխավոր, հիմնական կազմակերպության, վորը կառուցված է հեղափոխական մարքսիզմ-լենինիզմի գրանիտ հիմքի վրա, այդ ուսմունքը դարձել է ամբողջ աշխարհի միլիոնավոր առաջավոր բանվորների ուսմունք:

Լենինի և Ստալինի ստեղծած՝ բուլղարիայի կուսակցութունը


¹ Ստալին, «Ուղղիցիայի մասին» ժող., էջ 441:

III Կոմունիստական Ինտերնացիոնալի բոլոր կուսակցությունների համար մի նմուշ դարձավ: Իսկ նրանք, ովքեր պայքարում էին Լենինի դեմ՝ մենչև ինքները, տրոցիկտները և բուխարինական-սիկովյան ունեղատները, դարձան Փաշխտների ուղղակի դորձակալութուն, դաշնակիցներ ու կամակատարներ:

Բուլղարիայի ծրագիրը, սորատեղիան, տակտիկան և կազմակերպական սկզբունքները մի նմուշ են հանդիսանում միջազգային պրոլետարիատի համար, Կոմունիստական Ինտերնացիոնալի համար:

Բանվորական շարժման մեջ հաղթեցին բուլղարիայի կազմակերպական սկզբունքները, բուլղարիայի տակտիկան ու սորատեղիան վոչ միայն մեր յերկրում: Ուրիշ յերկրների բանվոր դասակարգի մեծագույն դժվարությունները կայանում էին նրանում, վոր նա իր պայքարի վճռական մոմենտներում բուլղարիայի կուսակցութուն չուներ, վոր շատ դաժան պարտությունների և կորուստների դնով է նա յուրացնում իր կուսակցությունը բուլղարիայի յենթարկելու անհրաժեշտությունը: Սակայն բանվոր դասակարգը յուրացրեց այն արդեն մի շարք յերկրներում՝ Ֆրանսիայում, Իսպանիայում, Չինաստանում: Նա կյուրացնի այն ամեն տեղ, վորովհետև բուլղարիայը, Լենինի—Ստալինի ուսմունքը միակ ճիշտ, հեղափոխական թեորիան ու տակտիկան են, վորոնք ապահովեցին սոցիալիզմի վերջնական և անդարձ հաղթությունը աշխարհի մեկ վեցերորդ մասում և կապահովեն սոցիալիստական հեղափոխության հաղթանակն ամբողջ աշխարհում:

Մարքսիզմ-լենինիզմի մեծ դրոշի ներքո բանվոր դասակարգը կհաղթանակի ամբողջ աշխարհում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Բանվորական շարժումը Ռուսաստանում XX դարի սկզբներին	3
Լենինյան «Искра»-յի պայքարը հանուն կուսակցության	7
Տարածայնություններ ծրագրային հարցերի շուրջը «Искра»-յի խմբա- գրության ներսում	16
ՌՄԴԲԿ յերկրորդ համագումարը	26
ՌՄԴԲԿ II համագումարում տեղի ունեցած պատահական միջազգային նշանակությունը	36

Եջ
15

տող
14 Ն.

Վ. Բ. Գ. Ա. Ի.
տպված է
1904 թ.

պետք է լինի
1903 թ.

Քարզմ. Ռ. Վարդապետյան

Խմբ. Վ. Փինաչյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբագրիչ Հ. Մանվելյան

Կոնսրոլ սրբ. Ա. Տ.-Մկրտչյան

Դրավիտի լիազոր № 3319, հրատ. № 597,

Պատվեր № 129, տիրած 10,000

Հանձնվել է արտադրության 8/VIII 1938 թ.

Ստորագրվել է սպազրեւում 27/VIII 1928 թ.

Գինը 50 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության
սպարան, Յերևան, Ալավերդյան № 65

30
ՀՀ Ազգային գրադարան



NL0977617

23 СЕН. 1938

ԳԻՆԸ 50 Կ.

459

11

28538

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ

К 35-ЛЕТИЮ

II СЪЕЗДА РСДРП

Аргиз — Издательство полит. литературы
Ереван, 1938